Амфиболовые габбро. Плагиоклаз – 45–60%, клинопироксен – 0–10%, амфибол – 30–50%, биотит – 0–5%, рудный минерал – 3-4%, апатит до 3%, сфен, рутил. Амфибол коричневатый, с переходами в коричневато-зеленый, плеохроирует до слабо желтого: Np< Nm \approx Ng; cNg =12-13⁰. В кристаллах амфибола наблюдаются реликты клинопироксена, а также следы растворения биотита. Неравномерное развитие амфибола по породе наблюдается нередко в пределах одного шлифа.

Структура породы при псевдоморфном замещении пироксена амфиболом гипидиобластовая или бластогаббровая, чаще – кумулобластовая и гломеробластовая; при развитии амфибола по ксенобластовому субстрату плагиоклаза – пойкилобластовая и пойкилопорфиробластовая.

Концентрация апатитовых призмочек в амфиболовых оторочках вокруг клинопироксена позволяет связывать развитие амфибола с воздействием растворов, несущих летучие.

Петрохимия габброидов. В табл.1 приводится средний химический состав клинопироксен-амфиболовых (1) и амфиболовых габбро (2 и 3).

Таблица 1

	SiO ₂	TiO ₂	Al ₂ O ₃	Fe ₂ O ₃	FeO	MnO	MgO	CaO	Na ₂ O	K ₂ O	P_2O_5	ппп	
1	40,16	0,59	19,30	7,60	6,18	0,30	10,20	13,76	1,28	0,32	0,45		100.14
2	42,07	1,67	18,50	12,94		0,20	6,55	12,84	2,62	0,64	1,24	0.68	99,96
3	42,18	1,33	18,94	12,86		0,21	6,03	12,35	2,63	0,74	1,3	1.48	100.05

Химический состав габброидных пород

Примечание: 1 клинопироксен-амфиболовые габбро – данные Б.М.Меликсетяна по 7 образцам (1985); 2, 3 амфиболовые габбро – по результатам микрозондового сканирования;. 2 – № Кј-12-07 (Moritz et al., 2016), 3 – № S-201 (координаты: 39 06.15 и 46 13.27) – данные авторов

Главные элементы образца S-201 были проанализированы рентгеноспектральным флюоресцентным (XRF) методом (SARM в Нанси, Франция), РЗЭ и ряд других элементов-примесей – масс-спектрометрией с использованием индуктивно-связанной плазмы (ICP-MS). Изотопные характеристики Sr, Nd, Pb получены в Университете Монпелье-2 (Франция).

Различия в химизме между клинопироксен-амфиболовыми и амфиболовыми габбро отражаются повышенными содержаниями TiO_2 и P_2O_5 в последних и совершенно не характерны для интрузивных пород Мегринского плутона (Moritz et al., 2016). Возрастание P_2O_5 коррелирует с достаточно высоким развитием апатита в амфиболовых габбро; титан распределен между сфеном, титано-магнетитом и, частично, содержится в роговой обманке.

Таблица 2

	∑Fe/Mg	100Ti/	Al ₂ 0 ₃ /	Na20+K20/	K+ Na/	Ti/Cr	V/Cr	Ni/Co	K/Rb	Rb/Sr
		∑Fe	$\Sigma Fe0+Mg0$	Al ₂ 0 ₃	\sum Fe+Mg					
1	0,90	8	0,80	0,14	0,0007	364	22	0,75	273	0,04
2	1,10	25	0,95	0,27	0,17	5142	244	0,20	750	0,01
3	1,19	18	1,00	0,26	0,18	8350	55	0,40	777	0,01

Петрохимические характеристики габброидных пород

Возрастание показателя железистости или мафического индекса от 0,90 до 1,19, и коэффициента титанистости от 8 до 25 в амфиболовых габбро, сопровождается увеличением соотношений сидерофильных элементов – Ti/Cr, V/Cr, Ni/Co (табл.2), что, несомненно, обусловлено привносом в систему кроме Ti также V и Co и выносом Mg и Ni (табл.3)

Таблица 3

Содержание редкоземельных элементов и элементов-примесей в амфиболовых габбро (ppm)

	S-201	Kj-12-07		S-201	Kj-12-07		S-201	Kj-12-07
Rb	18,82	15	Nd	73,28	73	Lu	0,3	0,4
Sr	1718,21	1606	Sm	11,77	15	Hf	1,78	2,5
Y	27,32	40	Eu	3,36	3,5	Та	0,42	0,5
Zr	69,49	81	Gd	9,43	12	Th	4,5	3,7
Nb	10,23	11	Tb	1,11	1,4	U	1,05	0,9
Cs	0,76	1,5	Dy	5,96	8,3	Co	34,41	43
Ba	458,64	449	Но	1,02	1,5	Cr	6,978	2
La	69,85	63	Er	2,76	3,6	Ni	15,03	9
Ce	149,28	135	Tm	0,34	0,5	V	385,7	488
Pr	17,13	17	Yb	1,96	2,9	Pb	6,47	5
						Zn	110,5	100

Примечание: S-201 – данные авторов; Kj-12-07 (Moritz et al., 2016)

С возрастанием характеристик общей щелочности – K+ Na/ Σ Fe+Mg от 0,0007 до 0,17-0,18 и Na₂0+K₂0/Al₂0₃ от 0,14 до 0,27 наблюдается соответственно изменение соотношений – K/Rb и Rb/Sr (рассчитано по данным Б.М.Меликсетяна, 1985). При относительно инертном поведении Rb привнос Sr коррелирует с увеличением в породе содержаний апатита. В табл. 3 приводится содержание редкоземельных элементов и элементов-примесей в амфиболовых габбро.

В редкоземельном спектре интрузивных пород олигоцена нормализованном к хондритам (Moritz et al., 2016), кривая амфиболовых габбро занимает самую верхнюю позицию, что говорит об обогащенности пород РЗЭ. Это потверждается и нашими данными, что проиллюстрировано на рис.3. По наклону кривых распределения (рис.3а), а также LREE/HREE La/Yb_N – 25,6; La/Sm_N – 3,83, амфиболовые габбро обнаруживают более высокую степень обогащенности легкими РЗЭ в сравнении с интрузивными породами олигоценового комплекса, известными редкоземельно-цериевой специализацией (Меликсетян, 1964, 1984; Адамян, 1966).



Рис.3. Распределение хондрит-нормализованных (а) и нормализованных к примитивной мантии редкоземельных элементов и элементов-примесей (б) в амфиболовых габбро (Sun & McDonough, 1989).

На графике интрузивных пород олигоцена, нормализованных к примитивной мантии (Moritz et al., 2016), также наблюдается обогащенность пород легкими редкоземельными элементами. Здесь кроме негативных аномалий Ta – Nb и Ti – P, присущих всему комплексу вулкано-плутонических пород Зангезурского рудного района от среднего эоцена до раннего миоцена, отмечаются Zr-Hf и менее значимые Rb и Pb минимумы, обусловленные амфиболовыми габбро образца Kj-12-07. Тождественность геохимических спекторов обр. Kj-12-07 и S-201 (рис.3б). позволяет полагать, что отмеченные минимумы характеризуют метасоматические изменения, формирующие амфиболовые габбро.

Отношение между изотопами стронция и неодима в образце S-201 имеют низкие значения: 87 Sr/ 86 Sr – 0.70388, 143 Nd/ 144 Nd_(i) – 0.51282; первичное отношение изотопов свинца умеренно высокое 207 Pb/ 204 Pb_(i) – (15,57); 208 Pb/ 204 Pb_(i) – (38.70); 206 Pb/ 204 Pb_(i) – (18.69).

Обсуждение результатов и выводы

Амфиболизация как характерная особенность северной монцонитовой интрузии Мегринского плутона неоднократно отмечалась исследователями магматизма Зангезурского рудного района и воспринималась как результат железо-магнезиального метасоматоза (Мкртчян и др. 1969; Джафаров, 1974; Меликсетян, 1985; Карамян и др., 1987). Выделенная нами амфиболизация габброидов возораздельной части Мегринского хребта по северному экзоконтакту среднезернистых гранитоидов имеет свою специфику: она определяется возрастающей щелочностью минералообразующей среды, привносом Ті, летучих, легких редкоземельных элементов, при незначительном выносе из клинопироксен-амфиболовых габбро сильных оснований – Mg, в меньшей степени, Ca и Fe^{2+} . Развитие амфибола по клинопироксен-амфиболовым габбро не приводит к образованию пород более основных, чем исходные, и по незначительности изменений петрохимических характеристик первичных пород в сравнении с амфиболовыми габбро амфиболизация скорее соответствует метаморфическим изменениям. Вместе с тем развитие прожилковых и гнездообразных обособлений амфибола в породе, переходы их к минеральным ассоциациям железомагнезиального метасоматоза позволяют предположить, что развитие амфибола по габброидам знаменует начало метасоматических изменений.

Миграционный путь вынесенных из клинопироксен-амфиболовых габбро породообразующих элементов краток: он фиксируется в тех же амфиболовых габбро в виде прожилков амфибол-биотит-магнетит-апатитового состава. Развитие в полосе амфиболовых габбро, кроме минеральных ассоциаций железо-магнезиального метасоматоза, калишпат-пироксеновых, калишпатовых, пироксен-альбитовых, альбит-амфиболовых, эпидот-роговообманковых, кварц-эпидотовых, кварц-полевошпатовых метасоматитов свидетельствует о продолжающейся метасоматической переработке пород. Комплекс перечисленных фаций метасоматитов известен в связи с редкометально-редкоземельной минерализацией Халдзан–Цахиринской зоны в Монголии (Андреев и др., 1996) и месторождения Эль-озеро в России (Baginski et al., 2016).

Изотопные датировки по цирконам амфиболовых габбро TIMS U-Pb методом – 33,49*Ma* (Moritz et al., 2016) могут быть соотнесены ко времени образования клинопироксен-амфиболовых габбро. Таким образом, формированию олигоценовых пород кварц-монцонит, монцонит-монцодиоритового (Moritz et al., 2016) или монцонит-сиенодиоритового комплекса 28,2-31*Ma* (Мелконян и др., 2014) предшествует внедрение интрузии клинопироксен-амфиболовых габбро, получивших значительное развитие в породах Мегринского плутона.

Выделенный нами новый тип амфиболизации пород Мегринского плутона, в результате которого образуются амфиболовые габбро, интересен прежде всего, обогащенностью последних редкоземельными элементами. Приуроченность к полосе амфиболовых габбро разнотипных метасоматитов, которые формируются в течение единого петрологического процесса, наряду с тенденцией к накоплению и укрупнению в них акцессорных минералов, концентрирующих редкоземельные элементы, позволяет рассматривать полосу амфиболовых габбро в качестве перспективной на редкоземельную минерализацию.

Благодарности

Авторы выражают глубокую благодарность заведующей лабораторией Литологии и региональной геологии ИГН Л.Г.Саакян, взявшей на себя заботу по проведению колоссального объема аналитических работ, касающихся вещественного состава амфиболовых габбро, а также за консультации по ряду вопросов.

Литература

- Агамалян В.А. Геолого-петрографическое строение северной части западного склона Мегринского хребта. Фонды ИГН АН Армянской ССР, 1963, 100с.
- Адамян А.И. Интрузивные породы Мегринского плутона. в кн.: Геология Армянской ССР, т. III, Петрография. Интрузивные породы. Ереван, Изд.АН АрмССР, 1966, с.7-92.
- Андреев Г.В., Рапп Г.С. Редкометальные эпидот-кварцевые метасоматиты массива Халдзан-Бурэгтэг. Зап. Всерос. Минерал об-ва, 1996, № 6, с.24-30.
- Асланян А.Т. Региональная геология Армении. Ереван, Изд. Айгирк, 1958, 340с.
- Гукасян Р.Х., Меликсетян Б.М. Об абсолютном возрасте и закономерностях
- формирования сложного Мегринского плутона. Изв.АН АрмССР, Науки о Земле, 1965, № 3,4,5, с.8-26.
- Гуюмджян О.П. Геологическое строение, магматизм и метасоматические образования Западного Баргушата. Автореф. дис. на соиск уч.ст. кандидата геол-мин. наук; Ереван, 1970, 49с.
- Гуюмджян О.П. Магматизм и метасоматические образования Армении. Ереван, ГЕОИД, 2011, 660с.
- Джафаров А.А. Роль магматизма и метасоматизма в формировании Мегринского плутона.. Автореф. дис.на соиск. уч.ст. кандидата геол-мин. наук; Ереван, 1970, 28с.
- Джрбашян Р.Т., Гуюмджян О.П., Таян Р.Н. Палеовулканические формации позднеальпийского этапа развития юго-восточного склона Малого Кавказа. Труды II Всесоюзн. Симпозиума по палеовулканологии. Петрозаводск, 1977, 8с.

- Карамян К.А., Таян Р.Н., Гуюмджян О.П. Основные черты интрузивного магматизма Зангезурского рудного района Армянской ССР. Изв. АН АрмССР, 1974, № 1, с.54-65.
- Карамян К.А., Таян Р.Н., Арутюнян М.А., Аревшатян Т.А., Саркисян С.П., Авакян А.А., Маданян О.Г. Постмагматические образования Зангезурского рудного района. Ереван, Изд. АН АрмССР, 1987, 199с.
- **Мкртчян С.С., Карамян К.А., Аревшатян Т.А.** Каджаранское медно-молибденовое месторождение. Ереван, Изд. АН АрмССР, 1969, 300с.
- Меликсетян Б.М., Архипов Б.К., Капралов Г.П., Мещерякова В.Б. Особенности тектоно-магматического развития и закономерности размещения магматизма и оруденения в южной части Малого Кавказа. - Сообщ. I. Изв. АН АрмССР, Науки о Земле, № 6, 1975, с. 52-69; - Сообщ. 2. Изв. АН АрмССР, Науки о Земле, № 1, 1976, с.31-50.
- **Меликсетян Б.М.** Петрология, минералогия, гехимия палеоген-неогеновых интрузивных формаций Памбак-Зангезурской структурно-формационной зоны (заключительный отчет). Фонды ИГН АН Армянской ССР, 1985, 560с.
- **Меликсетян Б.М**. Петрология, геохимия и рудоносность палеогеновых вулкано-интрузивных формаций Малого Кавказа (магматизм зон коллизий). Автореф. дис. на соиск. док. геол.-мин. наук. Тбилиси, 1989, 54 с.
- Мелконян Р.Л., Гукасян Р.Х., Таян Р.Н., Хоренян Р.А., Овакимян С.Э. Геохронометрия монцонитов Мегринского плутона (Армения) результаты и следствия. Изв.НАН РА, Науки о Земле, 2008, № 2, с.3-9.
- Мелконян Р.Л., Моритц Р., Таян Р.Н., Селби Д., Гукасян Р.Х., Овакимян С.Э. Главнейшие медно-порфировые системы Малого Кавказа. Изв.НАН РА, Науки о Земле, 2014, № 1, с.3-29.
- Таян Р.Н. Новые данные о геологическом строении интрузии порфировидных гранитов и гранодиоритов Мегринского плутона. Изв.АН Арм.ССР, геологич. и петрографич. Науки, 1963, № 3, с.77-85.
- Таян Р.Н., Вартанесов В.А., Саркисян С.П., Маданян О.Г., Кукулян М.А., Арутюнян М.А. Геологическое строение, структуры, закономерности локализации оруденения Личкского рудного поля в М 1:10000, с уточнением прогнозной оценки запасов месторождения применительно к подсчету меди) по работам 1986 88гг. Е., Фонды "Армцветметразведка" Армянской ССР, 1988, 219с.
- Таян Р.Н. О Центральной магмо-рудоконтролирующей зоне Зангезурского рудного района. Изв.НАН РА, Науки о Земле, 1998, № 3, с.20-27.
- Ходжабагян Г.С., Арутюнян Р.А., Меликсетян Б.М. Особенности геологического строения и магматизма ЮВ части Мегринского плутона. Изв. АН АрмССР, Науки о Земле, 1976, № 2, с.3-18.
- **Գույումջյան Հ.Պ., Մանանդյան Հ.Մ.** Զանգեզուրի մագմատիկ հանգույցների ինտրուզիվների ֆորմացիոն ստորաբաժանումը։ Երկրաբանական ֆակուլտետի 70-ամյակին նվիրված գիտական նստաշրջանի նյութեր։ Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2006, էջ 41-54։
- Baginski B., Zozulja., MacDonald R., Kartashov P.M., Dzierzanowski P. Law-temperature hidrothermal alteration of the rare-metal rich quartz-epidote metasomamite from the El'ozero depozit, Kola Peninsula, Russia. European Journal of Mineralogy, № 4, 2016 p.789-810.
- Melkonyan R., Moritz R., Tayan R., Selby D., Hovakimyan S. (2013). Copper-molybdenum porphyry ore-magmatic systems in the Lesser Caucasus. Conference on Recent Research Activities and New Results about the Regional Geology, the Geodynamics and the Metallogeny of the Lesser Caucasus. A SCOPES meeting. Georgia, April 16-18, 2013. p.5
- Rezeau H., Moritz R., Ovtcharova M., Ulianov A., Melkonyan R., Tayan R., Hovakimyan S., and Chiaradia M. 2014. Magmatism associated with porphyry Cu-Mo deposits of the composite Tertiary Meghri-Ordubad pluton, Southern Armenia, Lesser Caucasus. Proceedings XX Congress of the Carpathian Balkan Geological Association, 24-26 September 2014, Tirana, Albania, abstract volume, p.177. (http://www.cbga2014.org /doc/PCBGASSAV1.pdf)
- Moritz R., Rezeau H., Ovtcharova M., Hovakimyan S., Chiaradia M., Tayan R., Melkonyan R., Ramazanov V., Ulianov A., Putlitz B. (2015). Tethyan subduction to post-subduction magmatic evolution and pulsed porphyry Cu-Mo deposit emplacement in the southernmost Lesser Caucasus. In: Anne-Sylvie André-Mayer et al. (eds), "Mineral resources in a sustainable world", 13th SGA Biennial Meeting, France, Nancy, 24- 27 August 2015, v.1, p.145-148.

- Rezeau H., Moritz R., Wotzlaw J-F., Hovakimyan S., Tayan R. and Selby D. (2015). Pulsed porphyry Cu-Mo formation during protracted pluton emplacement in Southern Armenia, Lesser Caucasus: the potential role of crustal melting for ore recycling. In: Anne-Sylvie André-Mayer et al. (eds), "Mineral resources in a sustainable world", 13th SGA Biennial Meeting, France, Nancy, 24- 27 August 2015, v.1, p.343-346.
- Rezeau H., Moritz R., Wotzlaw J-F., Tayan R., Hovakimyan S. and Selby D. (2015). Linking pulsed porphyry Cu-Mo formation to distinct magmatic episodes during 30 million years of pluton emplacement in southern Armenia, Lesser Caucasus. Accepted in: "World-class ore deposits: discovery to recovery", SEG 2015 Conference, Australia, TAS, Hobart, 27–30 September 2015.
- Moritz R., Rezeau H., Ovtcharova M., Tayan R., Melkonyan R., Hovakimyan S., Ramazanov V., Selby D., Ulianov A., Chiaradia M., Putlitz B. Long-lived, stationary magmatism and pulsed porphyry systems during Tethyan subduction to post-collision evolution in the southernmost Lesser Caucasus, Armenia and Nakhitchevan. Gondwana Research, 2016, 37, p.465-503.

Рецензент О.Гуюмджян

ՄԵՂՐՈՒ ՊԼՈՒՏՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՍԻ ԱՄՖԻԲՈԼԱՅԻՆ ԳԱԲՐՈՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՆՔԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Մ.Ա. Հարությունյան, Ա.Ե. Հովհաննիսյան, Վ.Վ. Սիրադեղյան

Ամփոփում

Մեղրու պլուտոնի կենտրոնական մասի ամֆիբոլային գաբրոները ձևավորվել են կլինոպիրոքսեն-ամֆիբոլային գաբրոների ինտենսիվ ամֆիբոլացման արդյունքում, որը պայմանավորված է միջահատիկ գրանիտների ներդրմամբ։ U-Pb իզոտոպային մեթոդով, որոշվել է ամֆիբոլային գաբրոներում ցիրկոնների հասակը. 33,49±0,02Ma (Moritz et al., 2015), ինչը վկայում է, որ կլինոպիրոքսեն-ամֆիբոլային գաբրոները օլիգոցենի ինտրուզիվ համալիրի մաս են։

Կլինոպիրոքսեն-ամֆիբոլային գաբրոների ամֆիբոլիզացումը բնորոշվում է Ti-ի, ցնդող նյութերի և հազվագյուտ հողերի պարունակությունների աձով, ինչը ուղեկցվում է ուժեղ հիմքերի՝ Mg-ի, ավելի քիչ Ca և, մասնակիորեն Fe²⁺-ի դուրսբերմամբ։ Ամֆիբոլային գաբրոներում հայտնաբերված են ալբիտ-ամֆիբոլային, կալիում-սպաթային, ամֆիբոլ-էպիդոտային և այլ մետասոմատիտներ, որոնք հայտնի են հազվագյուտ հողերի հանքայնացմամբ։ Հազվագյուտ հողեր կուտակող միներալների (սֆեն, ցիրկոն, ապատիտ) քանակի ավելացումը մետասոմատիտներում, հիմք է տալիս ամֆիբոլային գաբրոների գոտին դիտարկել որպես հեռանկարային՝ հազվագյուտ հողերի առկայության տեսանկյունից։

AMPHIBOLIC GABBRO OF THE CENTRAL PART OF MEGHRI PLUTON AND THEIR ORE-BEARING POTENTIAL

M.A. Harutyunyan, A. E. Hovhannisyan, V.V. Siradeghyan

Abstract

The amphibolic gabbro of the central part of Meghri pluton have been formalized as a result of the intensive amphibolization of the clinopyroxeneamphibole gabbro which is determined by the insertion of the medium-grained granites. Through the U-Pb isotope method the zircons age in the amphibole gabbro has been determined – $33,49\pm0,02$ Ma (Moritz et al., 2015) – which indicates that the clinopyroxene-amphibole gabbro are a part of the oligocene intrusive complex.

The amphibolization of the clinopyroxene-amphibole gabbro is characterized by the increase of the Ti, evaporating materials, and extinct soil contents which is accompanied by the withdrawal of the strong bases such as Mg, Ca – a little less, and Fe^{2+} – partially. There are albite-amphibolic, potassium-leucite, amphibole-epidote and other metasomatites discovered in amphibolic gabbro which are well-known for the mineralization of the extinct soils. The number increase of the minerals (titanite, zircon, apatite) in the metasomatites which accumulate extinct soils gives us a ground to consider the amphibolic gabbro territory as a perspective one from the extinct soils presence point of view.

ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2017, 70, № 1, 49-59

ԳԵՈՌԱԴԱՐԱՅԻՆ ՀԱՆՈՒՅԹԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ (ՇԵՆԳԱՎԻԹ, ԵՐԵՎԱՆ)

© 2017r. Մ.Ռ. Գևորգյան, Ր.Ռ. Դուրգարյան, Հայկ Իգիթյան, Էլյա Սահակյան

22 ԳԱԱ Երկրաբանական Գիտությունների Ինստիտուտ (22, p.Երևան 0019, Մարշալ Բաղրամյան պողոտա, 24ա) e-mail: gevmikayel@gmail.com Հանձնված է հրատարակչություն 13.03.2017թ.

Գեոռադարային զոնդավորումը համարվում է մերձմակերեսային ստրուկտուրաների ուսումնասիրման համար երկրաֆիզիկական մեթոդ, որն ունի լայն կիրառում հնագիտության բնագավառում։ Գեոռադարային զոնդավորման հիմքում ընկած է էլեկտրամագնիսական իմպուլսների վերծանումը և զոնդավորման միջավայրի շերտերի սահմաններից անդրադարձած ազդանշանների գրանցումը, որոնք ունեն տարբեր էլեկտրաֆիզիկական հատկություններ։ Հիմնական նպատակն է շերտերի սահմանների հզորության և տեղադրման խորության որոշումը։ Քանի որ գեոռադարային զոնդավորման մեթոդիկան աշխատում է անընդհատ ռեժիմով և ստացված անհամասեռությունները տալիս են մեզ տեղեկատվություն անհամասեռության տեղի, դիրքի և չափսերի վերաբերյալ, այդ իսկ պատմառով շատ արդյունավետ է հնագիտական ուսումնասիրություններ իրականացնեու համար։ Շենգավիթ տեղամասում գեոռադարային հանույթի ստացված արդյունքները հիմք են հանդիսացել հետագա հնագիտական պեղումների համար։

Հայտնաբերվել են մի շարք թաղված պատմամշակութային կառույցներ, ինչպես նաև առանձնացվել են շերտեր, որոնք իրենց մեջ պարունակում են հին բնակատեղիի տվյալներ։ Գեոռադարային հանույթի տվյալների հիման վրա քարտեզագրված հնագիտության տեսակետից հեռանկարային տեղամասերում իրականացվել են փորձարարական պեղումներ, որոնք ամբողջովին հաստատել են գեոռադարային հանույթի արդյունքերի հավաստիությունը։

1. Ներածություն

Երկրաֆիզիկական մեթոդները արդյունավետ են մակերեսային և մերձմակերեսային ստրուկտուրաների հայտնաբերման և ուսումնասիրման համար (Գևորգյան, 2015; Իգիթյան և ուր․, 2015)։

Այս մեթոդները վերջին ժամանակներս լայն կիրառվում են հնագիտության բնագավառում։ Դրանք նպաստում են պատմամշակութային թաղված օբյեկտների հայտնաբերման և ուսումնասիրման աշխատանքներին։ Իրականացված ուսումնասիրությունների արդյունքերի հիման վրա հնարավոր է լինում մեծ Ճշտությամբ կազմել տվյալ օբյեկտի եռաչափ մոդելը։ Այդպիսի մեթոդներ են հանդիսանում գեոռադարային հանույթը, մագնիսահետախուզությունը և այլն։ Այս աշխատանpnւմ կիրառվել է գեռռադարային եռաչափ հանույթը հնագիտական ինդիրների լուծման նպատակով։ Արտերկրում նմանատիպ աշխատանքներ իրականացվել են բազմաթիվ գիտնականների կողմից (Karakhanyan et al., 2014; Conyers et al., 2011; Hansen et al., 2014; Schultz et al., 2011; Novo et al.,2011; Okazaki et al., 2013; Zhao et al., 2013; Bersezio et al., 2007): ՀՀ տարածքում այսօրինակ ուսումնասիրություն կատարվում է առաջին անգամ։

2. Հետազոտությունների նկարագրությունը և մեթոդիկան.

Շենգավիթ բնակատեղիի տարածքում երկու փուլով իրականացվել են հնագիտա-երկրաֆիզիկական հետազոտություններ, առանձնացված 1 և 2 տեղամասերում, որոնց տեղադիրքը ներկայացվում է գեոռադարային հանույթի համար նախատեսված փաստացի նյութերի սխեմատիկ քարտեզի վրա (նկ.1)։

Առաջարկվող տեղամասերում եռաչափ (3D) գեռռադարային հանույթ իրականացնելու և հնարավորինս մանրամասն տեղեկատվություն ստանալու նպատակով, տեղամասը բաժանվել է 3 կանոնավոր երկրաչափական մակերեսների, որոնք էլ բաղկացած են առանձին պրոֆիլներից, որոնց միջև հեռավորությունը եղել է 2 մետր` պայմանավորված հետազոտվող կառույցների չափերից։ Բացի այդ, տեղամասերի առանձին հատվածներում, պայմանավորված ռելիեֆի, հնագիտական պեղումների և ժամանակակից կոմունիկացիոն գծերի առկայությամբ, իրականացվել են միայն պրոֆիլային հանույթներ։



Նկ.1. Առանձնացված 1 և 2 տեղամասերի տեղադիրքը փաստացի նյութերի սխեմատիկ քարտեզի վրա (հիմք՝ Google earth map)

Աշխատանքներում օգտագործվել է SIR–3000 (ԱՄՆ 2008թ.) գեոռադարային համակարգը, 200MHz հաձախականությամբ ընդունիչ և տվիչ ալեհավաքով, ինչը թույլ է տվել սքանավորել մինչև 9 մետր խորությամբ երկրաբանական կտրվածքը, սակայն հաշվի առնելով հնագետների կարծիքը, հետազոտությունների խորությունը արհեստականորեն սահմանափակվել է 4.2մ խորությամբ։

Գեոռադարային զոնդավորման հիմքում ընկած է էլեկտրամագնիսական իմպուլսների վերծանումը և զոնդավորման միջավայրի շերտերի սահմաններից անդրադարձած ազդանշանների գրանցումը, որոնք ունեն տարբեր էլեկտրաֆիզիկական հատկություններ։ Հիմնական նպատակն է շերտերի սահմանների հզորության և տեղադրման խորության որոշումը։

Գեոռադարային համակարգի կիրառման համար մուտքային պարամետրեր են հանդիսանում տեսակարար մարումը և միջավայրում էլեկտրամագնիսական ալիքների տարածման արագությունը, որն էլ իր հերթին ներկայացնում է միջավայրի էլեկտրական բնութագիրը։ Միննույն ժամանակ, մարումը բնութագրում է զոնդավորման խորությունը, իսկ արագությունը մինչև անդրադարձման սահմանն ընկած հեռավորությունը։ Միջավայրում էլեկտրամագնիսական ալիքների տարածման արագությունը կախված է նրա դիէլեկտրիկ և մագնիսական թափանցելիության աստիՃանից։

Այսպիսով, արագությունը միջավայրում հակադարձ համեմատական է միջավայրի դիէլեկտրիկ թափանցելիությանը, որտեղ C-ն լույսի արագությունն է վակումում։

$$V = \frac{C}{\sqrt{\varepsilon}}$$

Այսպիսով, միջավայրի դիէլեկտրիկ թափանցելիությունը և նրանց արագությունը էապես կախված չեն գրունտների տատանման հաձախականությունից և նրանց տիպից, բայց խիստ կախված են գրունտների ջրհագեցվածության մակարդակից։

Առաջին մոտեցմամբ էլեկտրամագնիսական ալիքների տարածումը ենթարկվում է երկրաչափական օպտիկայի օրենքներին։ Գեոռադարային հանույթի դեպքում միջավայրում հիմնական գործընթացները, դրանք ալիքների անդրադարձումը և դիֆրակցումն են (Владов и др., 2004):

Ալիքի նորմալ անկման դեպքում տարբեր **દ** դիէլեկտրիկ թափանցելիություն ունեցող երկու (1 և 2) միջավայրների անդրադարձման գործակիցը հավասար է.

$$\mathbf{K}_{\mathbf{0TP}} = \frac{\sqrt{\varepsilon_2} - \sqrt{\varepsilon_1}}{\sqrt{\varepsilon_2} + \sqrt{\varepsilon_1}} \, .$$

Անդրադարձած էլեկտրամագնիսական ալիքի տարածման սխեման, նրա ամպլիտուդան և տարածման պարբերությունը կունենան հետևյալ տեսքը (նկ.2)։



Նկ.2. Անդրադարձված էլեկտրամագնիսական ալիքի տարածման սխեման a) և նրա ամպլիտուդան ու պարբերությունը b)

Դաշտային չափումների արդյունքները մշակվել են Radan 6.5 համակարգչային փաթեթի կիրառմամբ (RADAN Software, 2007)։

Ռադարոգրամմայի գունային բաժանումը համապատասխանում է այս կամ այն միջավայրի, կամ գրունտների տատանումների սեփական պարբերությանը կամ նրանց բնորոշ ամպլիտուդային ու հետնաբար խտությունների բախշմանը։

Որպես արդյունք, գեոռադարային հանույթի վերջում ալեհավաքներից ստացված տեղեկատվությունը կամ հսկայածավալ ռադարոգրամմաների խումբը գրանցվում է ֆայլի տեսքով, որպես էլեկտրամագնիսական ալիքների խումբ, որն էլ հետագայում ինտերպոլացվում և վիզուալացվում է հետազոտված տեղամասի երկրաբանական կտրվածքների կամ եռաչափ մոդելի տեսքով, որոնք կներկայացվեն ստորև՝ առանձին տեղամասերի նկարագրության ժամանակ (Владов и др., 2004):

3. Ստացված արդյունքներ

Իրականացված 3D գեոռադարային հանույթի 3 տեղամասերը և առանձին պրոֆիլների տեղադիրքերը ներկայացված են փաստացի նյութերի սխեմատիկ քարտեզի վրա (նկ.1)։

Ստորև ներկայացվում է առանձին տեղամասերի նկարագրությունը եռաչափ հանույթի արդյունքում։

Եռաչափ հանույթի ժամանակ առանձնացվել են երեք հիմնական հորիզոններ, որոնցից առաջինը 0-1.2մ խորությունն է, որը հիմնականում ներառում է ժամանակակից կոմունիկացիոն գծեր կամ բետոնի առկայություն։ Երկրորդ՝ մեզ համար ամենահետաքրքիր խորությունը, տարածվում է 1.2-2.8մ սահմաններում և հիմնականում ներառում է հնագիտական օբյեկտներ. պատեր, խորշեր և այլն։ Երրորդ՝ վերջին շերտը, հիմնականում լցված է ավելի խիտ նստվածքներով, տեղ-տեղ պարունակում է հնագիտական տեսակետից հետաքրքրություն ներկայացնող տարրերի ֆրագմենտներ (կամ մասնիկներ)։ Տեղամաս II-I –ը ընդհանուր պլանի վրա (նկ.1), ներկայացված է դեղինով։ Ինչպես երևում է այդ նկարից եռաչափ հանույթը բաղկացած է եղել առանձին պրոֆիլներից, որոնց վրա առանձնացված են երկրակեղևի վերին 4 մետր շերտում տեղ գտած անոմալիաները՝ որպես դատարկություններ, պատեր և այլն (նկ.3)։



Նկ.3. 2D գեոռադարային հանույթի առաջին պրոֆիլը առանձնացված տարրերով

Նկար 3-ում ներկայացված է գեռռադարային ռադարագրամմայի մշակումը, որի արդյունքում ներփակող ապարներից հստակ առանձնանում են անոմալիաները, որոնք նշված են կետագծերով։ Ուսումնասիրվող տեղամասում հայտնաբերվել են մի շարք նմանատիպ անոմալիաներ։ Վերջիններիս տարածական պատկերը ստանալու համար իրականացվել է գեռռադարային եռաչափ հանույթ, որի տվյալների հիման վրա կազմվել են անոմալիաների եռաչափ մոդելներ։

Բոլոր տեղամասերի եռաչափ մոդելները կազմելիս օգտագործվել են պրոֆիլներով առանձնացված անոմալիաները (նկ.4)։



Նկ.4 a-c. II – I Տեղամասում առանձնացված անոմալիաները ըստ առաջնահերթության





Նկ.5. Տեղամաս II-II ֆիքսված անոմալիաները, մանուշակագույնով ներկայացված է երկրորդական անոմալ դրսևորումը, իսկ առաջնային են համարվում կանաչով առանձնացված շրջաններով ընդգծված անոմալիաները

Տեղամաս I–ը ընդհանուր պլանի վրա (նկ.1) ներկայացված է մանուշակագույնով։ Առանձնացված անոմալիաների ներկայացված են նկար 6-ում։



Նկ.6. Տեղամաս I ֆիքսված բոլոր հիմնական անոմալիաները, a- հարթության վրա, b և c եռաչափ կառուցվածքում

Գեոռադարային եռաչափ հանույթի տվյալների արդյունքում հիմնականում առանձնանում են գլանաձևին մոտ մարմիններ, որոնք տեղակայված են երկրի մակերեսից մոտավորապես 1.2-2.8մ խորություններում։ Այդ մարմիններն ունեն ուղղահայաց տարածում։ Երկրաֆիզիկա-հնագիտական վերլուծության արդյունքում նմանատիպ գլանային անոմալիաները կապվում են հնագիտության հետ և համարվում են հեռանկարային տեղամասեր՝ պեղումներ իրականացնելու համար։



Նկ.7. Առանձնացված հեռանկարային հնագիտական տեղամասերը հետազոտված տարածքի փաստացի նյութերի սխեմատիկ քարտեզի վրա

Այնուհետև դրանք տեղադրվել են փաստացի նյութերի դաշտային սխեմատիկ քարտեզի վրա (նկ.7)։

Գեոռադարային հանույթի ուսումնասիրությունների հիման վրա իրականացվել են հնագիտական պեղումներ, որոնց արդյունքում հաստատվել են ստացված տվյալները (նկ.8)։

Նկար 8-ի b մասում պատկերված է դաշտային աշխատանքների փաստացի նյութերի սխեմայի այն հատվածը, որը, ըստ երկրաֆիզիկական տվյալների, հեռանկարային է հնագիտական պեղումներ կատարելու տեսակետից։ Նկարի a հատվածում պատկերված է պեղումների արդյունքում բացահայտված պատմամշակութային կոթողը, որը գլանաձև է և մեծ Ճշտությամբ համընկնում է գեռոադարային եռաչափ հանույթով ստացված անոմալ օբյեկտի հետ։



Նկ.8. Առանձնացված հեռանկարային հնագիտական տեղամասերը և դրանց պեղման արդյունքները

4. Եզրակացություն

Հետազոտված առանձին տեղամասերը, շատ հետաքրքրական էին երկրաֆիզիկական դաշտերի բազմազանության, ինչպես նաև կուտակված նյութի հարստության տեսակետից։ Նախապես նշենք, որ հետազոտված ամբողջ տարածքը հարուստ է հնագիտական տարաբնույթ և տարբեր աստիձանի քայքայված կառույցներով, ինչը բավական բարդ իրավիձակ էր ստեղծում գեոռադարային հանույթի համար, շատ դեպքերում ստացվում էին իրարամերժ արդյունքներ, կախված կառույցի առանձին տարրերի քայքայվածության աստիձանից կամ պատրաստված նյութի խտությունից։ Այդ պատձառով ընդհանուր դաշտում հնագիտական տեսակետից հետաքրքրական տեղամասերը մեր կողմից առանձնացվել են մեծ վերապահումներով և զգուշությամբ, միայն բազմակողմանի վերլուծության արդյունքում են ընտրվել և քարտեզագրվել տեղամասեր, որոնք հետագայում կարող են ուղեցույց հանդիսանալ հնագետների հետազոտությունների համար։

Հեռանկարային հնագիտական տեսանկյունից ստացված տեղեկատվությունը գնահատվել է նկար 7-ում առանձնացված տեղամասերով, որոնք եռաչափ մոդելներում և երկրաբանական կտրվածքներում աչքի են ընկնում մեծ քանակի վառ արտահայտված անոմալ դրսևորումներով՝ ստորգետնյա արհեստական (անտրոպոգեն) դատարկություններով և իրենց հատուկ պատերով։

Ուսումնասիրված ամբողջ տարածքի համար հետաքրքրական խորությունները առավելագույնը տարածվում են մինչև 3 մետրի նիշը, առավելագույն անփոփոխ կամ կայուն մնացած խորությունը 2 մետրն է, որտեղ հիմնականում պահպանված են հնագիտական կառույցների կամ դրանց պատերի հիմքերը։

Միևնույն ժամանակ հարկ ենք համարում նշել, որ առանձնակի ուշադրության են արժանի այն տեղամասերում հայտնաբերված անոմալիաները, որոնք տեղադրված են կամ կապվում են կտրվածքի գոգավոր կառուցվածքների հետ, ինչը մեր կարծիքով բնութագրական է Շենգավիթ բնակատեղիի հնագիտական տեղամասի համար։

Պատկերը ավելի պարզ և նկարագրության տեսակետից մատչելի դարձնելու համար պետք է նշենք, որ առանձնացված անոմալիաների մի մասը հաստատվել են պեղումների ժամանակ (նկ.8)։

Oգտագործելով գեոռադարային հանույթի տվյալները մյուսների համար կառուցվել են եռաչափ մոդելներ։ Գեոռադարային ուսումնասիրությունների, եռաչափ մոդելների և հնագիտական տվյալների համատեղ վերլուծության արդյունքում առանձնացվել են հեռանկարային անոմալիաներ՝ հնագիտական պեղումների տեսակետից։ Նմանատիպ վերլուծությունների արդյունքում ուսումնասիրվող տեղամասում առանձնացվել են ավելի քան 20 օբյեկտ։

Գրականություն

- **Գևորգյան Մ.**, Գեոռադարի օգտագործումը հնագիտասեյսմոլոգիական հետազոտություններում Ամենհոտեպ III Փարավոնի տաձարի տարածքում (Լուքսոր, Եգիպտոս); ԵՊՀ ՈԻԳԸ Գիտական հոդվածների ժողովածու: ԵՊՀ, հրատարակչություն, բնական գիտություններ, 2015, N1.2(5), էջ 86- 93:
- **Իգիթյան Հ.Ա., Գևորգյան Մ.Ռ., Դուրգարյան Ր.Ռ., Բաբայան Հ.Ե.** "Ակտիվ խզվածքների գոտում մերձմակերեսային ձեղքվածքների հայտնաբերումը գեռռադարային հանույթի կիրառմամբ (ՍՅՈՒՆԻՔ, ՀԱՅԱՍՏԱՆ)" ՀՀ, ԳԱԱ Տեղեկագիր Գիտություններ Երկրի մասին, 2015, N2, էջ 61-70։
- Владов М., Старовойтов А., Введение в георадиолокацию. Учебное пособие-М:Издательство МГУ, 2004, с.25.
- **Bersezio R., Giudici M.** and **Mele M.** Combining sedimentological and geophysical data for highresolution 3-D mapping of fluvial architecture elements in the Quaternary Po plain (Italy). Sedimentary Geology 202, 2007, p. 230-248.
- **Conyers B L.** «Discovery, mapping and interpretation of buried cultural resources non-invasively with ground-penetrating radar» JOURNAL OF GEOPHYSICS AND ENGINEERING, J. Geophys. Eng., 2011, **8**, p.S13–S22.
- Hansen J.D., Pringle J.K. and Goodwin J., GPR and bulk ground resistivity surveys in graveyards: locating unmarked burials, in contrasting soil types. Forensic Science International 237, 2014, p.14-29.
- Karakhanyan A., Avagyan A., Sourouzian H., Lopez Roa C., Gevorgyan M. "Evidence of a Strong Earthquake in the Period Between 1200 and 900 BC Identified in the Temple of Amenhotep III and in Other Temples of the Ancient Thebes". Archaeological Heritage and Multidisciplinary Egyptological Studies, vol 1, 2014, p.321-344.
- Novo A., Lorenzo H., Rial F.I. and Solla M. 3D GPR in forensics: finding a clandestine grave in a mountainous environment. Forensic Science International 204: 2011, p.134-138.
- **Okazaki H., Nakazato H.** and **Kwak Y.** Application of high-frequency ground penetrating radar to the reconstruction of 3D sedimentary architecture in a flume model of a fluvial system. Sedimentary Geology 293, 2013, p.21-29.
- **RADAN Software:** The Most Advanced GPR Data Processing Software. Geophysical Survey Systems, Inc 2007.

Schultz J.J. and Martin M.M. Controlled GPR grave research: comparison of reflection profiles between 500 and 250 MHz antennae. Forensic Science International, 209, 2011, p. 64-69.
Zhao W., Forte E., Pipan M. and Tian G. Ground penetrating radar (GPR) attribute analysis for archaeological prospection. Journal of Applied Geophysics 97, 2013, p.107-117.

Գրախոսող՝ Մ. Առաքելյան

ПРИМЕНЕНИЕ ГЕОРАДАРА ДЛЯ ВЫЯВЛЕНИЯ АРХЕОЛОГИЧЕСКИХ ОБЪЕКТОВ (ШЕНГАВИТ, ЕРЕВАН)

М.Р. Геворгян, Р.Р.Дургарян, А.А.Игитян, Э.Э.Саакян

Резюме

Георадарное зондирование является геофизическим методом для изучения приповерхностных структур; данный метод имеет широкое применение в археологии. В основе георадарного сканирования лежит излучение электромагнитных импульсов и регистрация отраженных сигналов с границ слоев зондируемой среды, которые имеют разные электрофизические свойства. Основной целью является определения глубины залегания и мощностей границ слоев. Поскольку методика георадарного зондирования работает в непрерывном режиме и полученные неоднородности дают нам информацию относительно места, положения и размера неоднородности, по этой причине данная методика очень эффективна для проведения археологических исследований. Полученные результаты георадарной съёмки на участке Шенгавит послужили основой для проведения дальнейших археологических раскопок.

Были найдены захоронения культурно-исторических построек, а также выделены слои, которые содержали в себе данные о древних поселениях.

На основе данных георадарной съёмки на перспективных, с археологической точки зрения, участках были осуществлены экспериментальные раскопки, которые целиком подтвердили достоверность результатов георадарной съёмки.

THE APPLICATION OF GEO-RADAR FOR REVEALING ARCHAEOLOGICAL OBJECTS (SHENGAVIT, YEREVAN)

M.R. Gevorgyan, R.R.Durgaryan, H.A.Igityan, E.E.Sahakyan

Abstract

Geo-radar sounding is considered a geophysical technique to study subsurface structures, which is largely applied in the field of archeology. Geo-radar sounding is based on the analysis of electromagnetic pulses and record of signals reflected from the layers of the sounding environment that have different electrical and physical properties. The main purpose is to determine the boundaries, thickness, and bedding depth of the layers. Considering the fact that the geo-radar sounding is operated in continuous mode and that the detected inhomogeneities may inform us on the location, position, and dimensions of an object producing inhomogeneity, the technique has been proven to be very efficient in the course of realization of archeological studies. At the Shengavit site, the results of the geo-radar survey have served the basis for further archeological excavations.

A series of buried historical and cultural structures and layers containing information related to the ancient settlements were identified. Trial excavations have been carried out within the sites mapped by the geo-radar survey data which have completely proven the credibility of the findings of the geo-radar survey.

ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2017, 70, № 1, 60-75

ՆՈՐ ՏԵԿՏՈՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ՆՈՐԱՏՈՒՍ-ՔԱՆԱԳԵՂ ԱԿՏԻՎ ԽԶՎԱԾՔԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՏՈՒՄ

© 2017 թ. Ա.Վ. Ավագյան, Լ.Հ.Սահակյան, Թ.Պ.Աթալյան, Հ.Գ. Հովակիմյան, Պ.Վ. Թոզալաքյան

22 ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պ. 24^ա e-mail: <u>avagn1064@gmail.com</u> Հանձնված է խմբագրության 06.02.2017թ.

Հոդվածում քննարկվում են Սևանա լիձը հարավ-արևմուտքից գոտևորող Նորատուս-Քանագեղ տեկտոնական խզվածքի տարածման և կինեմատիկ առանձնահատկությունները։ Հետազոտությունները թույլ են տալիս Սևանա լՃի հատակում լՃային ժամանակակից նստվածքների տակ բացահայտել տեկտոնական խախտման առկայությունը և նրա տարածումը՝ հենվելով ստորջրյա երեք տասնյակից ավելի աղբյուրների և արտազատվող գազերի կետերի տարածական բաշխվածության վրա։

Մտորջրյա ակտիվ սեգմենտի բացահայտումը ցույց է տալիս այլ, երկրորդային բնական վտանգի, ցունամիի հավանականությունը, երբ սեգմենտի ակտիվացման հետ լՃի հատակում կգոյանա տեկտոնական սկարպ։

Ներածություն

Փոքր Կովկասի տեկտոնական խոշոր աղեղային կառույցների ներբլոկային ակտիվ խզվածքների ուսումնասիրությունը համեմատաբար փոքր տարածքներ ընդգրկող երկրների համար հաձախ ունենում է հիմնարար նշանակություն։ Այդ երկրների թվում է Հայաստանի Հանրապետությունը, որի տարածքը գտնվելով ակտիվ լեռնակազմական գոտու Արաբա-Եվրասիական ցամաքային կոլիզիայի առանցքային հատվածում առանձնանում է ակտիվ խզվածքների մեծ խտությամբ։ Վերջիններս կարող են ունենալ ոչ շատ մեծ տարածում և համեմատաբար փոքր և միջին մագնիտուդային ներուժ։ Սակայն, բնակչության մեծ խտությունների (Գեղարքունիքի մարզը ունի 6000կմ² տարածք՝ 280 հազար բնակչությամբ, 92 համայնքներով, որից 5-ը քաղաքային) և մեծ ծավալների հողօգտագործման պայմաններում վերջիններիս ուսումնասիրությունը, բնական վտանգի տեսակետից, նույնպես դառնում է կարևոր։

Վարնետքային և վարնետքային բաղադրիչով ակտիվ խզվածքների օրինակները լավ արտահայտված են Գեղամա լեռների ջրբաժանային հատվածում և նրա արևելյան լանջերին (Милановский, 1952, 1968; Караханян и др., 2004; Avagyan et al., 2005, 2010; Karakhanyan et al., 2016) ишհմանափակելով տեկտոնահրաբխային ծագման Սևանա լՃի հարավ արևմտյան հատվածը։

Երկրաբանական կառույցների ուսումնասիրվածության տեսանկյունից Սևանա լՃի հյուսիս-արևելյան հատվածը, որտեղով անցնում է Հարավ Հայկական բլոկի հյուսիսային եզրին համապատասխանող միջին յուրա – վաղ կավձի օֆիոլիթային գոտին, բավական ուսումնասիրվել են վերջին տասնամյակի ընթացքում (e.g. Galoyan, 2008; Sosson et al., 2010; Asatryan et al., 2010; Ավագյան, 2013)։ Տեկտոնական ակտիվության տեսանկյունից այս գոտին հիմնականում վերահսկվում է Փամբակ-Սևան-Սյունիք ակտիվ խզվածքով։

Վերջին տարիներին հիմնվելով գոյություն ունեցող ռելիեֆի երկրաֆիզիկական (հիմնականում էխոգրաֆիկ) հանույթների վրա (Ավագյան, 2013; Karakhanyan et al., 2016) ուսումնասիրվել են նաև բուն Սևանա լճի հատակի առանձնահատկությունները։ Այստեղ տեղին է նշել, որ Սևանա լիճը, 1240կմ² մակերեսով հանդիսանում է Կովկասյան տարածաշրջանի ամենախոշոր լիճը, որի մակերեսը կազմում է Հայաստանի Հանրապետության տարածքի մոտ 4.2%-ը, իսկ նրա ջրահավաք ավազանը (մոտ 4891կմ²)՝ 17%-ը։

Վերոնշյալ ձեռքբերումներով հանդերձ Սևանա լՃի հատակը մնում է անբավարար ուսումնասիրված և նրա հարավ արևմտյան ափամերձ կառույցները՝ մասնավորապես Նորատուս խզվածքի գոտին լրացուցիչ ուսումնասիրությունների կարիք ունի։

Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ, Գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող գիտական ծրագրի շրջանակներում, "Ստորջրյա սուզումների և հետազոտությունների հայկական կենտրոն"-ի (CARPS) հետ համագործակցությամբ Սևանա լՃի ափամերձ, Նորատուս-Քանագեղ տեկտոնական խախտման գոտում իրականացվեցին համալիր ստորջրյա տեկտոնական հետազոտություններ։

Նորատուս-Քանագեղ ակտիվ խզվածքի գոտին

Ուսումնասիրության տարածքը գտնվում է Գեղամա լեռների կենտրոնական հատվածի արևելյան, մեղմաթեք 5-10° լանջերին։ Այստեղ չորրորդական լձային, ալյուվյալ, լձագետային, հրաբխանստվածքային ապարներից զատ մերկանում են նաև նեոգեն-չորրորդական նստվածքներ և հրաբխային գոյացություններ (անդեզիտային բազալտներ, բազալտներ և նրանց պիրոկլաստիկ նյութը) (Խարազյան, 2005)։

Այս տարածքի գլխավոր առանձնահատկություններից է նեոգենչորրորդական հրաբխականության և երիտասարդ խզվածքների առկայությունը (Ջրբաշյան, 2013; Паффенгольц, 1948; Габриелян, 1963; Милановский, 1952, 1968; Джрбашян и др. 2002; Караханян и др., 2004; Avagyan et al., 2001, 2010; Karakhanian et al., 2001, 2016), ինչով պայմանավորված է տարածքի երկրադինամիկ ակտիվությունը` արտահայտված նաև երկրաշարժերով։ Հայտնի են 1322թ. Мw6.6 և 1226թ. Мw6,2 պատմական և 1992թ. Mw5.4 գործիքային ժամանակահատվածի երկրաշարժերը (NorAtom 2011 սեյսմիկ կատալոգ (Karakhanyan et al., 2011) (նկ.1))։ Այստեղ, ակտիվ խզվածքներից են Գավառագետի և Նորատուսի կառույցները։ Վերջինս հանդիսանում է այս հոդվածի ուսումնասիրության հիմնական օբյեկտը։ Խզվածքը հայտնի է Սարիկայա (Милановский, 1952, 1968) և Նորատուս (Avagyan et al., 2010; Karakhanyan et al., 2016) անուններով։ Նորատուսի և Արտանիշի թերակղզիների միջև ենթադրվող, Մեծ և Փոքր Սևանները բաժանող կառույցի հետ չշփոթելու և տարածվածությունը ընդգծելու համար այսուհետ կօգտագործենք Նորատուս-Քանագեղ ակտիվ խզվածք անվանումը (Նորատուսի թերակղզուց հարավ՝ ափամերձ հատվածում տարածվում է Քանագեղի հուշարձանային համալիրը (նկ.1))։

Արևմուտքից՝ Գավառագետի վարևետքային բաղադրիչով և դեպի արևմուտք անկող խզվածքի հարթությամբ և արևելքից՝ Նորատուս-Քանագեղի վարնետքային և դեպի արևելք անկող խզվածքի հարթությամբ կառույցները սահմանափակում են մոտ 20-25կմ հյուսիս-հարավ ձգվածությամբ և 4-7կմ լայնությամբ բլոկը, որը հանդիսանում է տեկտոնական հորստ (Милановский, 1968; Avagyan, 2001)։ Վերոհիշյալ բլոկը կանվանենք Գավառի բլոկ, իսկ կառույցը՝ Գավառի հորստ (նկ.1)։



Նկ.1. A-Ռելիեֆի եռաչափ մոդելի և Սևանա լՃի հորիզոնականների քարտեզը, 1-գազերի և աղբյուրների ստորջրյա կետերը, 2-բնակավայրեր, 3-դիտարկումների կետեր։ B-օրթոգոնալ տիեզերական նկար, Ն.հ.-Նորատուս հրաբուխ, Կ.հ.-Կարապ հրաբուխ։ C-Սևանա լՃի հատակի ռելիեֆի պրոֆիլներ (պրոֆիլների գծերը ցույց են տրված P1 և P2 նշաններով A-ում) Գավառի հորստի կինեմատիկ առանձնահատկությունները ամրողջությամբ համահունչ են Գեղամա լեռների և Սևանա լձի ավազանի հարավի համար գնահատված մոտ 2.4+/-0.9մմ.տ⁻¹ (առանցքի ազիմուտը N 60[°] է) ընդարձակմանը (Davtyan, 2007)։

Մի քանի լքված հովիտներ տեղադրված են Գավառի հորստային բլոկի վրա։ Երևույթը պայմանավորված է հիմնականում Գավառագետի խզվածքի, ուղղաձիգ բարձրությամբ մինչև 250մ հասնող սկարպի ձևավորմամբ։ Վերջինս ամբարտակել է և շեղել Գեղամա լեռների արևելյան լանջերից իջնող ջրային հոսքերը։ Գավառ քաղաքի և հարակից տարածքում ժամանակավորապես ձևավորվել է տեկտոնական ծագման լճակ։ Գավառ քաղաքին մոտ, դեպի հյուսիս Գավառագետի խզվածքը կտրուկ փոխում է իր ուղղությունը հյուսիս-հարավից N110°, և կինեմատիկան դառնում է հիմնականում աջակողմյան կողաշարժ (Avagyan, 2001)։

Գավառի հորստի լքված հովիտներից մեկի երկայնքով, Երանոս գյուղից մոտ 3.5կմ հյուսիս հայտնաբերվեց հնագիտական համալիր (աստղանիշ 1, նկ.1)։ Համալիրը ներկայացված է հսկայաբեկոր պատերով, առանձին կառույցներով և ամենահետաքրքիրը՝ արհեստական ամբարտակով։ Արդյո՞ք ամբարտակը կառուցվել է գետային հունի լքման հետ կապված։ Հետագա ուսումնասիրությունները թույլ կտան գտնել պատասխաններ։

Հիմնվելով գոյություն ունեցող երկրաբանական և կառուցվածքային հրապարակված նյութերի (Милановский, 1952, 1968; Караханян и др., 2004; Karakhanian et al., 2001, 2016; Avagyan et al., 2001; 2010 և այլն), հեռազննման (տարբեր տիեզերական և օդալուսանկարների վերլուծություն), տեղանքի եռաչափ մոդելների, տեղագրական քարտեզների, ինչպես նաև դաշտային ուսումնասիրությունների ակնհայտ է, որ հյուսիս-հարավ տարածման Նորատուս–Քանագեղ խզվածքը ունի խիստ արտահայտված վարնետքային կինեմատիկա, սեգմենտավորված է առաջին կարգի 5-10կմ երկարությամբ հատվածների։

Նորատուս-Քանագեղ խզվածքի ակտիվությամբ է պայմանավորված Նորատուսի (Սարիկայայի) հաստվածքի մերկացումը մոտ 45մ հզորությամբ (նկ.2)։ Այն իրենից ներկայացնում է հրաբխանստվածքային, նստվածքային, հրաբխային առաջացումների բարդ կոմպլեքս, որոնց կուտակումը սկսվել է վերին միոցենից հասնելով մինչև հոլոցեն (Милановский, 1953)։ Միլանովսկին հանգել է այն եզրակացության, որ Սևանի ավազանի արևմտյան ափի լմային առաջացումների միասնական հաստվածք գոյություն չունի և որ այսպես կոչված Նորատուսի հաստվածքը բաժանվում է մի շարք ենթահաստվածքների՝ լմային, ալյուվիալ – պրոլուվիալ և հրաբխային (Милановский, 1952)։

Խզվածքի Նորատուսի սեգմենտի երկայնքով պահպանվել է տեղաշարժված մեկ բլոկ մոտ 650մ երկարությամբ և 250մ լայնությամբ, որը նորմալ խախտմամբ տեղաշարժված է մոտ 20մ ներքև (նկ.2)։ Այդ տեղաշարժը շատ լավ երևում է կտրվածքի վերին մասում զույգ սև խարամային շերտերի տեղաշարժմամբ (ցույց են տրված սպիտակ և սև սլաքներով), որը նկատել է նաև Միլանովսկին (Милановский, 1960)։ Այստեղ կարևոր է արձանագրել, որ իջած բլոկի շերտերի անկումները ակնհայտորեն ավելի մեծ են, եթե ստորին բլոկում նրանք մոտ են հորիզոնականին, ապա վերին բլոկում դրանք կազմում են 11-18°W։ Այս հանգամանքը ցույց է տալիս, որ խզվածքը ունի լիստրիկ բնույթ։

Նորատուս-Քանագեղ խզվածքի ամբողջական կուտակումային ուղղաձիգ բաղադրիչը գնահատվել է ըստ հորատանցքի տվյալների, իրագործված սկարպից 500մ արևելք։ 100մ ուղղաձիգ տեղաշարժ արձանագրվել է ըստ միևնույն ֆորմացիայի բարձրությունների։ Այս խզվածքը ակտիվ է եղել պլեյստոցենի և նույնիսկ հոլոցենի ժամանակ (Милановский, 1952):



Նկ.2. Նորատուս-Քանագեղ խզվածքի Նորատուսի սեգմենտի մեկ հատվածը։ 1-վարնետքի ստորին բլոկը, 2- վարնետքի վերին բոլկը։ Մլաքներով ցույց են տրված տեղաշարժված խարամային զույգ հորիզոնները (սև սլաքներով ստորին բլոկի վրա)։ Օբյեկտի տեղադիրքը ցույց է տրված նկ.1-ում։

Հրաբխականություն

Ինչպես նշվեց վերևում ուսումնասիրվող տարածքի գլխավոր առանձնահատկություններից է նեոգեն-չորրորդական հրաբխականության առկայությունը (Ջրբաշյան, 2013; Милановский, 1952, 1968; Караханян и др., 2004; Джрбашян и др., 2002; Karakhanian et al., 2001, 2016; Avagyan et al., 2001, 2010): Այն Նորատուսի հաստվածքում արտահայտված է նստվածքների հետ խառնված հրաբխային նյութով, ինչպես նաև պիրոկլաստիկ խարամային միջնաշերտերով (նկ.2): Ավելին, Նորատուս-Քանագեղ խզվածքի հյուսիային վերջավորությունում, խզվածքի սկարպից 0.5-1.5կմ դեպի արևելք են գտնվում Նորատուս և Կարապ հրաբուխները (В, նկ.1): Հաշվի առնելով խզվածքի վարնետքային կինեմատիկան, խզվածքի հարթության դեպի արևելք անկումը, սկարպի ռեգրեսիվ էռոզիան, ինչպես նաև սկարպի նշանակալից բարձրությունը, կարող ենք վստահաբար պնդել, որ երկու հրաբուխներն էլ գտնվում են խզվածքի գոտում և գենետիկորեն կապակցված են վերջինիս հետ։

Միլանովսկին (Милановский, 1968) կարծում էր, որ Գեղամա լեռների կառույցները, որոնք ծագումնաբանորեն կապված են հրաբիականության հետ, ժառանգվել են էոցեն-օլիգոցեն ժամանակներից։ Բազմապրոֆիլ ուսումնասիրությունների հիման վրա Ավագյանը (Avagyan et al., 2010) հանգել է եզրակացության, որ Գեղամա լեռների չորրորդական հրաբիականությունը վերահսկող կառույցների մի մասը ժառանգվել են պալեոգեն-նեոգեն ժամանակներից և այդ ժառանգված կառույցները այնուհետև ազդել են հետագա լարվածային դաշտի և տարածքի կառուցվածքա-երկրաբանական ձևավորման վրա։ Մեր կարծիքով Նորատուսի խզվածքը ավելի երիտասարդ կառույց է, համահունչ վերոհիշյալ ուշ չորրորդական (Кочарян, Ширинян, 1978) հասակի հրաբուխների հետ։

Հրաբխականության և խզումնային ակտիվության տարածքային կապվածությունը ակնհայտ է։ ժամանակային կապվածության մասին է խոսում այն հանգամանքը, որ Գավառագետի խախտման հյուսիսում ձևավորված ժամանակավոր ամբարտակային, տեկտոնական ծագման լձային նստվածքներում առկա են հնարավոր երիտասարդ ժայթքման հրաբխալձային նստվածքներ՝ սինգենետիկ խզվածքահրաբխային ակտիվություն (Avagyan et al., 2010)։

Նորատուս հրաբխի լանջերին և խառնարանային հատվածում հայտնաբերված 10-15սմ տրամագծով գլաքարերը, բավական գիտական վեձերի տեղիք են տվել։ Անցյալում առկա էր կարծիք, որ այն կապված է հրաբխային ապարատի գոյացման հետ, երբ հրաբխային նյութը կտրել է Սարիկայայի հաստվածքը (Паффенгольц, 1946; Милановский, 1953)։ Կարապետյանը (1965) հերքելով նախորդներին ավելի հետու գնաց, ենթադրելով, որ երկու հրաբուխներն էլ ձևավորվելուց հետո ծածկվել են Սևանի ջրերով։ Այս վարկածը պաշտպանեցին Քոչարյանն ու Շիրինյանը (Кочарян, Ширинян, 1978)։ Կարախանյանը գտնում է, որ Սևանա լձում, հատկապես Մեծ Սևանում հնարավոր են խզվածքային և սողանքային ակտիվությամբ պայմանավորված բարձր ալիքներ - սեյշեր (high seiche), որոնք, ափամերձ գոտում կարող են կուտակել ցունամիի նստվածքները (Karakhanyan et al., 2016)։

Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գլաքարերը բացակայում են Կարապ հրաբխի բարձրադիր լավաների վրա, մինչդեռ այն գտնվում է Նորատուս խարամային կոնի և Սևանա լձի ափագծի միջև և ունի հիպսոմետրիկ մոտ 30 մետրով ավելի ցածր դիրք։ Խառնարանի լանջերի խարամային մերկացումներում չհայտնաբերվեց որևէ գլաքար, ինչի մասին վկայում է նաև Կարապետյանը (1965)։ Նորատուսի խառնարանի ամբողջ տրամագծով կառուցված է պարիսպ, որի լայնությունը հասնում է 3 մետրի։ Կարապետյանը գրում է խառնարանի լանջերին կառույցների մասին (1965)։ Ակնհայտ է, որ խառնարանի հատակում գոյություն են ունեցել այլ կառույցներ։ Հետաքրքիր է, որ դեպի խառնարան տանող Ճանապարհի երկայնքով նկատվում է գլաքարերի ավելի մեծ խտություն։ Այս ամենից հետևում է, որ ամենայն հավանականությամբ գլաքարերը հայտնվել են խառնարանում մարդու գործունեության արդյունքում։

Սեյսմիտներ և հողերի ջրիկացում

ՀՀ տարածքում սեյսմիտների, այդ թվում հողերի ջրիկացման ուղղությամբ նպատակային ուսումնասիրություններ չեն իրականացվել։ Այնուամենայնիվ դրանց առկայությունը հնարավոր է երիտասարդ ավազակավային ջրհագեցած նստվածքներում, ինչպես օրինակ Արարատյան, Շիրակի, Սևանի ավազաններում և այլուր։ Հայտնի են պատմական նկարագրություններ, թե ինչպես 1840թ. երկրաշարժի ժամանակ Արաքս և Սև ջուր գետերի հովիտներում մոտ մեկ կիլոմետր լայնությամբ շերտով գոյանում էին մինչև 3մ լայնությամբ ձեղքեր, որոնցից ժայթքում էին ավազախառն մեծ շատրվաններ (Ստեփանյան, 1964)։ Կորժենկովը (Корженков и др., 2014) որոշ նախնական դիտարկումներ է արել Սևանի ավազանում (Фոքր Սևանի հյուսիս-արևմտյան հատվածում), սակայն դրանք դեռ կարիք ունեն քննարկման։

Նորատուս-Քանագեղ խզվածքային գոտում նույնպես դիտարկվում են սեյսմիտներ, որոնք հաշվի առնելով շերտագրական դիրքը ամենայն հավանականությամբ ունեն ավելի վաղ ծագում, քան խզվածքի ակտիվացման սկիզբը (նկ.3)։



Նկ.3. A- նկ.1-ի, աստղանիշ 2 կետի մերկացման լիթոլոգիական սյունյակը, В, C- սեյսմիտներ, D – Քանագեղի հատվածի աղբյուրների և գազերի արտահոսքի սխեմատիկ կտրվածք, 1-կոլյուվի, 2-ավազներ։ 1-տրախիանդեզիտներ, 2-խn2npmhumhų uduq, 3-միջահատիկ ավազ, 4- մանրահատիկ ավազ (a), կավ (b), 5- թեք շերտայնություն, 6-Мո-ային շերտ, 7-գլաքարեր, 8-սեյսմիտներ։

Միլանովսկին շատ հետաքրքիր դիտարկումներ է կատարել Նորատուս թերակղզուց հարավ ձանապարհի հարևանությամբ (աստղանիշ 2, նկ.1), նա նկարագրել է միկրոդիսլոկացիաներ, <<դիապիրային>> ծայքեր, որոնք ունեն մինչև 1-1.5մ երկարություն և զարգանում են կավավազային միջավայրում (Милановский, 1953)։ Միլանովսկին ենթադրել է, որ դրանք առաջացել են երիտասարդ նստվածքներում, երբ այն դանդաղ սահել է լՃի հատակով։ Մեր կողմից կատարված հետազոտությունները ցույց են տայիս, որ միայն յՃի հատակով դանդաղ հոսքով հնարավոր չէ բացատրել մերկացման ստորին մասի մինչև 6մ տեսանելի հզորությամբ ավազային շերտի, տարբեր հորիզոններում դիտարկվող դեֆորմացիաները (A, նկ.3)՝տարբեր չափսերի հասնող դայկաներ, ներդրումներ, կոնվոլյուցիաներ, որոնք, հաձախ ունեն ուղղաձիգ զարգացում նաև արևելք-արևմուտք ձգվածություն։ Նկարագրված ավազային շերտից ավելի վեր, առանձնանում են ևս երկու ավազային շերտեր։ Ստորինը ավելի խոշորահատիկ է և ունի երկաթային հողմնահարման դեղնավուն գույն։ Երկու շերտերում էլ նկատվում են ակնհայտ սեյսմիտներ՝ ավելի փոքր մասշտաբների, երբեմն հստակ սնկաձև ձևաչափությամբ (B,C, նկ.3)։ Տեղանքի վերյուծությունը վկայում է երկու-երեք խոշոր Mw>5 մագնիտուդով սեյսմիկ իրադարձությունների մասին, որոնցից առաջինը առավել հզոր էր, կամ շատ մոտ էպիկենտրոնին։

Հետազոտություններ Սևանա լՃի ջրային ավազանում

Սևանա լձի ջրային ավազանում, "Ստորջրյա սուզումների և հետազոտությունների հայկական կենտրոն"-ի (UUՀՀԿ կամ CARPS՝ ֆրանսերեն հապավումով) հետ համագործակցությամբ իրականացվել են վերջրյա և ստորջրյա հետազոտություններ։ CARPS-ը տրամադրեց ամբողջ նյութատեխնիկական բազան, որը ներառում էր. Մոտորանավակ (Progess 3 զինված Yamaha 60cv շարժիչով), մոտորանավակի տեղափոխման սայլակ, սոնար, լիցքավորման կոմպրեսոր Bauer Jr II, սուզորդական գույք, երեք ավտեմեքենա։ CARPS-ը անվձար ապահովեց նաև սուզորդական միջազգային կարգ ունեցող չորս ջրասույզներ (Կ. Թուլումջյան, Ս.Կոջոյան, Վ.Մելքոնյան, Ա.Ավագյան)։

Հետաքրքիր տվյալներ ստացվեցին Գավառագետի ստորին ավազանում, ուր արձանագրվեց, որ ներկայիս գետաբերանը չի գտնվում ջրի տակ դիտարկվող էռոզիոն հովտի շարունակության վրա (ցույց են տրված սլաքներով, աստղանիշ 3, նկ.1)։ Այժմյան գետաբերանի ցամաքային հատվածը հանդիսանում է կուտակումային ափամերձ գոտի, ուր արտահայտված չէ էռոզիոն ձորակ։ Սուզումները հաստատեցին ձորակի գոյությունը։ Այն շարունակվում է մինչև առնվազն 35 մ խորությունները։ Կարող ենք ենթադրել, որ Սևանա լՃի մակարդակը էռոզիայի ակտիվության ընթացքում եղել է մոտ 35մ ավելի ներքև և, հավանաբար, հրաբխային ակտիվությամբ պայմանավորված Հրագդան գետի հովտի ամբարտակմամբ տեղի է ունեցել ջրի մակարդակի արագ բարձրացում։ Այսինքն, էռոզիայի ակտիվության ժամանակ Մեծ Սևանը գոյություն չի ունեցել և ներկայիս տեսքով Սևանա լիՃը ձևավորվել է չորրորդականի, առավելագույնը վերին նեոգեն-չորրորդականի ընթացքում։

Աղյուսակ 1

Ստորջրյա աղբյուրների և գազերի արտազատման կետերի կոորդինատները։

Ν	Ν	Е
1	40°17′2,1″0	45°13'10,3″
2	40°16′59,7″	45°13′9,9″
3	40°16′59,9″	45°13′9,3″
4	40°17′2,2″	45°13′9,9″
5	40°17′2,2″	45°13′9,8″
6	40°16′59,9″	45°13′9,8″
7	40°17′0″	45°13'10,2"
8	40°17′0,3″	45°13'10"
9	40°17′0,5″	45°13′9,8″
10	40°17′0,8″	45°13'10,3″
11	40°17′1,2″	45°13'10,1"
12	40°17′1,6″	45°13'10,2"
13	40°17′1,6″	45°13'10,4"
14	40°17′1,7″	45°13'10,2"
15	40°17′1,9″	45°13'10,1"
16	40°17′1,9″	45°13'10,1"
17	40°17′2,1″	45°13'10,3″
18	40°19′17″	45°13′8,9″
19	40°16′18,3″	45°13′24,4″
20	40°15′20,5″	45°13′24,6″
21	40°16′21,2″	45°13′24,8″
22	40°16′21,7″	45°13′25,1″
23	40°16′25,7″	45°13′25,5″
24	40°16′30,7″	45°13′26,5″
25	40°15′0,3″	45°13′18,9″
26	40°15′57,9″	45°44′58,9″
27	40°17′50,7″	45°13'13,9"
28	40°17′57,9″	45°13'17,4"
29	40°17′41,8″	45°13′8,2″
30	40°15′58,1″	45°13'19"
31	$40^{0}15'58.1''$	45°13'19.3"

Իրականացվեցին մի քանի պրոֆիլներ հատակի ռելիեֆի մանրամասները Ճշգրտելու համար, այդ թվում ստորջրյա ենթադրվող հրաբուխի (Сатиан и др., 1968) վերաբերյալ (Նորատուսի թերակղզուց հարավ արևելք) (Р1 և Р2 նկար 1 և С, նկ.1)։ Այստեղ ստորջրյա հրվանդանի կենտրոնական մասում առկա է մոտ 1-1.3կմ տրամագծով օվալաձև գոգավորություն՝ մոտ 3-4մ խորությամբ, սակայն չդիտարկվեց կոնաձև կառույց, որը թույլ կտար պնդել հրաբխային կառույցի մասին։ Հետագա ուսումնասիրությունները թույլ կտան հասկանալու նրա բնույթը։

Նորատուս-Քանագեղ խզվածքը հատկապես Քանագեղի հատվածում (Նորատուսի թերակղզուց հարավ) ընդհուպ մոտենում է ժամանակակից Սևանա լՃի ափագծին (նկ.1)։

Հաշվի առնելով խզման հարթության դեպի լիճ անկումները և սկարպի ռեգրեսիվ հողմնահարումը, հասկանալի է դառնում, որ խզվածքի վերին և ստորին բլոկների վերին սահմանը տեղ տեղ գտնվում է Սևանա լճի ափամերձ ջրածածկ մասում (D, նկ.4)։ Որպես կանոն խզվածքի գիծը քարտեզագրելուց, գծանշվում է խզվածքով բաժանված հարևան բլոկների սահմնային գիծը։ Քանի որ այն համարյա ամենուր ծածկված է Սևանա լճի ժամանակակից նստվածքներով, խզվածքը գծագրվել է հիմնականում սկարպերի կատարային գծերով։

Դեռևս 2011 թվականին նկատվել էր ստորջրյա խոշոր երկու աղբյուրներ N40° 15′ 58.1″, Е45° 13′ 19″ կոորդինատներով, 2,3-2,6մ խորության վրա։ Ըստ Բալյանի և Բոշնաղյանի (Балян, Бошнагян, 1964) Նորատուս գյուղի հատվածում փորված հորատանցքի 84մ-ում խձակոնգլոմերատների հորիզոնը իր մեջ պարունակել է ջուր (լձի ջրին մոտ կազմությամբ)։ Խձա-կոնգլոմերատների հորիզոնը վերևից և ներքևից սահմանափակվում է անջրաթափանց կավային, հրաբխանստվածքային հզոր շերտերով։ Ենթադրվեց, որ Գավառի հորստի ստորգետնյա ջրերը հոսելով ջրամերժ շերտի վրայով հասնում են Նորատուս-Քանագեղ խզվածքի հարթություն, որը կհանդիսանա մասնակի ամբարտակ դրանց շրջանառության համար, ուստի չի բացառվում, որ ջուրը, առնվազն մասամբ խզվածքով դուրս գա գետնի մակերես։ Այդպիսով հնարավոր կլիներ Սնանա լձի ժամանակակից նստվածքների վրա ֆիքսել խզվածքի գծի արտապատկերումը։

2016 թվականին, Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող գիտական ծրագրի շրջանակներում իրականացված ստորջրյա հետազոտությունները գերազանցեցին բոլոր սպասումները։ Ստորջյա սուզումներով բացահայտվեցին երեք տասնյակից ավելի կետեր, որտեղից բխում էին աղբյուրներ և գազեր (աղ.1) ավելի քան 8կմ հյսուսիս-հարավ գծային ձգվածությամբ (նշված են սպիտակ շրջանակներով, նկ.1)։ Ընդ որում յուրաքանչյուր ներկայացված կոորդինատում կարող էին լինել տասնյակ աղբյուրների և գազերի արտահոսման կետեր (C,D, նկ.4), առանձին դեպքերում դիտարկվեցին համատարած գազերի արտազատում 3,5*2մ չափեր ունեցող մակերեսից (D, նկ.4)։ Երբեմն ջրագազային շիթը այնքան ուժգին է լինում, որ հատակի ավազի մեջ գոյանում են խառնարաններ (B, նկ.4)։ Վերջիններիս չափերը կարող են հասնել 0,5-0,9մ։ Այստեղ կարևոր է արձանագրել, որ եթե վերին և ստորին բլոկների սահմանից դուրս եկող աղբյուրի ջուրը կարող է նաև ուղղաձիգ դուրս չգալ լճային հատակի մակերես, ապա գազերի դեպքում այն հակում ունի ուղղաձիգ արտազատման։



Նկ.4. Ստորջրյա լուսանկարներ։ A-սուզորդ-երկրաբանը հատուկ տետրում արձանագրում է դիտարկումը, B, C, D – տարբեր ծավալների գազերի արտազատումը։

Գեոքիմիական հետազոտություններ

Հմի հատակից արտանետվող գազերի հետազոտումը կարևոր է, քանի որ թույլ է տալիս պատկերացում կազմել ընդերքի երկրաքիմիական կառուցվածքի, ինչպես նաև, լմում ընթացող էկոլոգիական փոխազդեցությունների մասին։ Արշավախմբի աշխատանքի ընթացքում գազերի նմուշառումը իրականացվում էր հետևյալ պարզ և արդյունավետ եղանակով (նկ.5)։ Այս եղանակը հնարավորություն է տալիս հեշտությամբ բացառել մթնոլորտի ազդեցությունը արդյունքների վրա։


Նկ.5։ Գազերի նմուշառման սխեման։

Գազը հավաքվել է պոլիմերային շշի մեջ, այնուհետև ջրի տակ հերմետիկ փակվել է խցանով։ Նմուշը պահվել է բերանով ներքև այնպես, որ գազի նմուշը մեկուսացված լինի արտաքին միջավայրից, բացի խցանից նաև ջրային շերտով։

Գազի նմուշների կազմի որոշման համար առաջին փուլում չափումը կատարվել է Biogas 5000 սարքի միջոցով, որը հնարավորություն է տալիս ուղղակիորեն չափել մեթանի, թթվածնի, ածխաթթու գազի, և անուղղակիորեն՝ ազոտի պարունակությունը գազի խառնուրդում։ Biogas 5000 սարքը ցույց տվեց, որ վերցված նմուշում 99% ածխաթթու գազ է։ Մնացած 1% կարելի է վերագրել չափման և/կամ նմուշառման հետևանքով առաջացած սխալին։ Հարկ է նշել, որ նմուշը իրենից ներկայացրել է անհոտ և անգույն գազի խառնուրդ։ Ավելի նուրբ, քրոմատագրիչով, վերլուծությունը հետազոտված նմուշում չհայտնաբերեց մեթանի կամ այլ գազի պարունակություն։ Ազոտի բացակայությունը նմուշում ցույց է տալիս, որ արտազատվող գազը իրենից օդ չի ներկայացնում։

Այստեղ քննարկման առարկա կարող է լինել այն հանագամանքը, որ գազն արտազատվում է ստորգետնյա ջրերի հետ։ *In situ* ջերմաստիձանի, էլեկտրահաղորդականության և pH հետագծումը նմուշառման կետում և նրա շրջակայքում նկատելի անոմալիա չբացահայտեց։ Ջերմաստիձանը տատանվում էր 13.6°C, էլեկտրահաղորդականությունը՝ 480մկ Սիմենս/սմ-ի, իսկ pH՝ 8.6։ Շեղումը չէր գերազանցում 0.1%։ Սա նշանակում է, որ գազի հետ միասին լիձ արտազատվող ջուրը զգալիորեն չի տարբերվել լձի ջրից։

Եզրակացություն

Սևանա լիՃը հարավ-արևմուտքից գոտևորող Նորատուս-Քանագեղ տեկտոնական խզվածքը երիտասարդ, հիմնականում վարնետքային կինեմատիկայով ակտիվ կառույց է։ Այն սահմանափակում է Գավառի հորստը արևելքից և Մեծ Սևանի ավազանը հարավ-արևմուտքից։ Խզվածքի հարթությունը ունի լիստրիկ բնույթ, իսկ նրա ակտիվությունը տարածա-ժամանակային առումով կապակցված է հրաբխային ակտիվության հետ։

Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ, Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող գիտական ծրագրի շրջանակներում, CARPS-ի հետ համագործակցությամբ, Սևանա լձի ափամերձ, Նորատուս-Քանագեղ տեկտոնական խախտման գոտում իրականացված համալիր ստորջրյա և վերջրյա տեկտոնական հետազոտությունները թույլ են տալիս Սևանա լձի հատակում բացահայտել ռելիեֆի առանձնահատկությունները, ինչպես նաև լՃային ժամանակակից նստվածքների տակ տեկտոնական խախտման առկայությունը։ Ստորջրյա աղբյուրների և նրանց հետ արտազատվող գազերի տարածական բաշխվածության հիման վրա հնարավոր եղավ բացահայտել առնվազն 8կմ երկարությամբ ափամերձ սեգմենտի առկայությունը։ Հնարավոր է գոյություն ունեն զուգահեռ այլ սեգմենտներ ավելի արևելքում, ռելիեֆի արտահայտված ավելի կտրուկ անկումներում (Karakhanyan et al., 2016), սակայն այս պահի դրությամբ մեր ստորջրյա հետազոտությունները դեռևս չեն բացահայտել աղբյուրների արտազատում, մի գուցե այն պարզ պատմառով, որ դրանք մակերես են դուրս գալիս առաջին խոշոր սեզմենտին հանդիպելուց և այնուհետև դեպի արևելք չեն տարածվում, կամ համարյա չեն տարածվում։ Ուսումնասիրության տարածքում ստորջրյա ակտիվ սեզմենտի բացահայտումը ցույց է տալիս այլ, երկրորդային բնական վտանգի առկայությունը կապված վերջինիս ակտիվացման հետ։ Խոսքը վերաբերում է Կարախանյանի և ուրիշների կողմից (Karakhanyan et al., 2016) ենթադրվող բարձր ալիքների, կամ ցունամիի գոյացմանը, երբ ապագա երկրաշարժի ժամանակ հատակում կգոյանա տեկտոնական սկարպ։

Ձեռք բերված ստորջրյա հետազոտությունների փորձը ապագայում հնարավորություն կընձեռի ընդարձակել աշխատանքների շրջանակը և լուսաբանել Սևանա լՃի վատ ուսումնասիրված հատակի առանձնահատկությունները։

Հեղինակները իրենց երախտագիտությունն են հայտնում CARPSին, նախագահ՝ Կլոդ Թուլումջյանին, սուզորդներ Ստեփան Կոջոյանին և Վահե Մելքոնյանին հետազոտական աշխատանքներին նպաստելու համար։

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 15T-1E041 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում։

Գրականություն

- **Ավագյան Ա.Վ.** Ակտիվ իզվածքների մերձմակերեսային դրսեվորումները շրջակա միջավայրում։ Երկրաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիձանի հայցման ատենախոսության։ ԵԳԻ, Երևան, 2013, 292 էջ։
- **Ստեփանյան Վ.Ա.** Երկրաշարժերը Հայկական լեռնաշխարհում և նրա մերձակայքում. <<Հայաստան>> հրատարակչություն, Երևան, 1964, 248 էջ։

Խարազյան Է.Խ. M1:500 000, Հայաստանի Երկրաբանական քարտեզ, 2005:

- **Ջրբաշյան Ռ.Տ.** Հրաբխագիտության հիմունքները և Հայաստանի նորագույն հրաբխականությունը։ Երևան, ՀՀ ԳԱԱ ՙԳԻՏՈՒԹՅՈՒՆ՚՚ հրատարակչություն, 2013, 120 էջ։
- Бальян С.П., Бошнагян П.С. Палеогеография и гидрология бассейна озера Севан. В сб.: Вопросы геологии Кавказа. Ереван, Изд. АН Арм ССР, 1964, с.37-48.
- Габриелян, А. А. Новейшая тектоника и сейсмичность Армянской ССР и смежных частей Антикавказа. Известия АН Армянской ССР, Геологич. и географич. науки, 1963, 16 (4-5). с.63-76.
- Джрбашян Р.Т., Карапетян С.Р., Мнацаканян А.Х. Позднеколлизионный риолитовый вулканизм СВ части Армянского нагорья. Труды ГИН АН Грузии, 2002, нов.серия, вып. 117, Тбилиси, с.63-93.
- Карапетян К.И. Вулканы Гегамского нагорья (Морфология, строение, классификация, связь с трещинной тектоникой). Академия Наук Арм. ССР. ИГН. Ереван, 1965, 278с.
- Караханян А., Джрбашян Р., Трифонов В., Филип Э., Аракелян С., Авагян А., Багдасарян А., Давтян В. Активные вулканы и вулканическая опасность на территории Армянского нагорья и сопредельных областей. Известия НАН РА, 2004, LVII, No. 1, с.3-24.
- Кочарян А.Е., Ширинян К.Г. "Каталог верхнеплиоцен четвертичных Вулканов Арм. ССР Том 2, Вулканы Гегамской и Варденисской вулканических областей. УДК 551.21 Изв.N, Ереван, 1978, 301с.
- Корженков А.М., Аванесян М.А., Вирджино А., Караханян А.С. 2014. Сейсмогенные конволюции в четвертичных отложениях озера Севан (Армения). Геология и геофизика, т. 55, № 1, с.56-65.
- Милановский Е.Е. Новые данные о строении неогеновых и четвертичных отложений бассейна оз.Севан. Изв. АН СССР. Серия геолог. 1952, № 4. с.110-119.
- **Милановский Е.Е.** "Геологическое строение и история формирования Севанской впадины. Т. I и II, Фонды ИГН АН Арм. ССР, 1953, 786с.
- Милановский Е.Е. Новейшая тектоника Севанской впадины. Бюллетень Московского общества испытателей природы. Отд. Геологии. Т XXXV (5), 1960, 61с.
- Милановский Е.Е. Новейшая тектоника Кавказа. М., Недра, 1968, 483с.
- Паффенгольц К.Н. Геология Армении. Государственное издательство геологической литературы министерство геологии СССР, М., 1948, 895с.
- **Паффенгольц К.Н.** Сейсмотектоника Армении и прилежащих частей Малого Кавказа. Ереван, Изд. АН Арм. ССР, 1946, 111с.
- Сатиан, М. А. and Степанян, Ж. О. Жамагорцян, В. Н. Открытие вулканических шлаков и пеплов среди донных осадков оз. Севан. Известия АН Армянской ССР, Науки о Земле, 1968, 21 (3), с.62-71.
- Asatryan G., Danelian T., Sahakyan L., Person A., Avagyan A., Sosson M. Evidence of Late Middle Jurassic to lower Cretaceous Tethyan oceanic lithosphere in the Lesser Caucasus based on new palaeontological (radiolarian) dating of the sedimentary cover of Sevan ophiolite (Armenia) Ofioliti, 2010, 35, p.91-101.
- **Avagyan A.** Estimation of the slip rates and the recurrence intervals of strong earthquakes on the fault system of Pambak-Sevan-Sunik (Armenia): Segmentation and relation with volcanic activity. PhD Thesis, Montpellier II University, France, 2001, 246p.
- Avagyan A., Sosson M., Philip H., Karakhanian A., Rolland Y., Melkonyan R., Rebai S., Davtyan V. Neogene to Quaternary stress field evolution in Lesser Caucasus and adjacent regions using fault kinematics analysis and volcanic cluster data. Geodinamica Acta 2005, 18, p.401-416.
- Avagyan A., Sosson M., Karakhanian A., Philip H., Rebai S., Rolland Y., Melkonyan R. & Davtyan V. Recent tectonic stress evolution in the Lesser Caucasus and adjacent regions. In:

Sedimentary Basin Tectonics from the Black Sea and Caucasus to the Arabian Platform. Special Volume. Eds. M. Sosson, N. Kaymakci, R. Stephenson, F. Bergerat, and V. Starostenko. Geol. Soc. of London, 2010, Special Volume 340, p.393-408.

- Davtyan V., Active Faults of Armenia: Slip Rate Estimation by GPS, Paleoseismological and Morpho-Structural Data. [Ph.D. thesis]: Montpellier II University, France, 2007, 244 p.Galoyan G. Etudes petrologiques, geochimiques et geochronologiques des ophiolites du Petit Caucase (Armenie). These de Docteur en Sciences de l'Universite de Nice-Sophia Antipolis, 2008, 287p.
- Karakhanyan A., Tozalakyan P., Grillot J.C., Philip H., Melkonyan R., Paronyan D., Arakelyan S. Tectonic impact on the Sevan Lake environment (Armenia). Environmental Geology, 2001, 40 (3), p.279-288.
- Karakhanyan A., Arakelyan A., Avagyan A., Baghdasaryan H., Durgaryan R., Abgaryan Ye., The Seismotectonic Model, Seismic Hazard Assessment for the Construction Site of a New Power Unit of the Armenian NPP: "NorAtom" Consortium Final Report: 2011, Yerevan, Armenia, Ministry of Energy of the Republic of Armenia, and Vienna, International Atomic Energy Agency, 328p.
- Karakhanyan A., Arakelyan A., Avagyan A., Sadoyan T. Aspects of the seismotectonics of Armenia: New data and reanalysis, *in* Sorkhabi, R., ed., Tectonic Evolution, Collision, and Seismicity of Southwest Asia: In Honor of Manuel Berberian's Forty-Five Years of Research Contributions: Geological Society of America Special Paper 2016, 525, doi:10. 1130/2016.2525(14). © 2016 The Geological Society of America.
- Sosson M., Rolland Y., Muller C., Danelian T., Melkonyan R., Adamia S., Kangarli T., Avagyan A., Galoyan G., Mosar J. Subductions, obduction and collision in the Lesser Caucasus (Armenia, Azerbaijan, Georgia), new insights. In /Geol. Soc. of London, Special Volume. //"Sedimentary Basin Tectonics from the Black Sea and Caucasus to the Arabian Platform", /M. Sosson, N. Kaymakci, R. Stephenson, F. Bergerat and V. Starostenko/, eds./, 2010, v. 340, p.329-352.

Գրախոսող՝ Խ. Մելիքսեթյան

НОВЫЕ ТЕКТОНИЧЕСКИЕ ДАННЫЕ ПО ЗОНЕ РАСПРОСТРАНЕНИЯ НОРАТУС-КАНАГЕГСКОГО АКТИВНОГО РАЗЛОМА

А.В.Авагян, Л.Г. Саакян, Т.П. Аталян, А.Г. Овакимян, П.В. Тозалакян

Резюме

В статье обсуждаются особенности распространения и кинематики Норатус-Канагехского тектонического разлома, обрамляющего с югозапада озеро Севан.

Впервые на территории РА, финансированием Государственным Комитетом по науке в соотрудничестве с "Армянским центром подводных погружений и исследований" (CARPS), в рамках научных исследований реализованы комплексные подводные тектонические исследования в прибрежной зоне оз. Севан, в районе Норатус-Канагехского тектонического разлома.

Исследованиями выявлено наличие тектонического нарушения. Его распространение определено на основе подводных родников и выделяю-

щихся из них газов из под современных озерных отложений на дне оз.Севан.

NEW TECTONIC DATA ON NORATUS-KANAGUEGH ACTIVE FAULTS EXTENSION

A.V.Avagyan, L.H. Sahakyan, T.P. Atalyan, A.G. Hovakimyan, P.V. Tozalakyan

Abstract

In the article the extension and kinematic particularities of Noratus-Qanagegh tectonic fault limiting Lake Sevan from the South-West are discussed.

For the first time in the territory of the Republic of Armenia, by financing of State Committee of Science of Armenia, in collaboration with "Armenian Center of Diving and Subaqueous Research" (CARPS), complex underwater tectonic research in the coastal zone of Sevan lake of Noratuz-Qanagegh fault zone was implemented within the framework of scientific research programme.

The investigations revealed the presence of a tectonic fault and determined its extension on the distribution of underwater springs and related gas emissionsunder the modern lacustrine sediments at the bottom of Sevan Lake.

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՎԱՂԱՐՇԱԿԻ (1934-2016)



2016թ. դեկտեմբերին, ծանր հիվանդությունից հետո, կյանքից հեռացավ ձանաչված գիտնական-երկրաքիմիկոս, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՌՖ Բնական գիտությունների ակադեմիայի և Նյու-Յորքի ակադեմիայի իսկական անդամ, երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Վաղարշակի Գրիգորյանը։

Ս.Գրիգորյանը ծնվել է 1934թ. ապրիլի 12-ին, Վարդենիսում։ 1958թ.-ին գերազանցությամբ ավարտել է Մոսկ-

վայի գունավոր մետաղների և ոսկու ինստիտուտի երկրաբանահետախուզական ֆակուլտետը և սկսել աշխատել քիմիական տեխնոլոգիաների Համամիութենական գիտահետազոտական ինստիտուտում։ 1963թ., թեկնածուական ատենախոսության պաշտպանությունից հետո, Ս.Գրիգորյանը հրավիրվում է աշխատելու ԽՍՀՄ Երկրաբանության նախարարության Համամիութենական երկրաբանա-երկրաքիմիական տրեստ` որպես գլխավոր երկրաբան։

1966թ.-ից Ս.Գրիգորյանն աշխատել է որպես բաժնի վարիչ, իսկ 1975թ.-ից մինչև 1986թ.՝ Երկրաբանության նախարարության Հազվագյուտ տարրերի միներալոգիայի, երկրաքիմիայի և բյուրեղաքիմիայի ինստիտուտում (ИМГРЭ) վարել է փոխտնօրենի պաշտոնը։

1971թ. Ս.Գրիգորյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսությունը, 1976թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում։ 1986թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից-անդամ, 1990թ.-ին` իսկական անդամ։

Ս.Գրիգորյանը երկրաքիմիայի ասպարեզի Ճանաչված գիտնական էր։ Նա մեծ ներդրում ունի օգտակար հանածոների հանքավայրերի որոնման երկրաքիմիական մեթոդների գիտական հիմունքների մշակման գործում։ Հեղինակ է երկու գիտական հայտնագործությունների, 11 գյուտերի, 370-ից ավելի հրատարակված աշխատությունների, որոնց թվում են 18 մենագրություններ։ Ս.Գրիգորյանը գլխավորել է նոր և շատ արդիական գիտական ուղղություն` թաքնված հանքայնացման որոնման երկրաքիմիական մեթոդների գիտական հիմունքների մշակում։ Նրա աշխատություններից շատերը լայնորեն մեջբերվում և թարգմանվում են արտասահմանում, իսկ մենագրություններից շատերը հրատարակվել են ԱՄՆ-ում, Չինաստանում, Չեխոսլովակիայում և Իրանում։

U.Գրիգորյանի անմիջական մասնակցությամբ ընդարձակվել են ԽՍՀՄ մի շարք հանքային շրջանների հանքահումքային բազաները։ Նրա գիտական մշակումները լայնորեն կիրառվել են նաև արտասահմանյան երկրներում, ինչի արդյունքում հայտնաբերվել են թաքնված հանքային մարմիններ և հանքավայրեր Չինաստանում, Բուլղարիայում, Շվեդիայում, Հնդկաստանում, Իրանում և մի շարք այլ երկրներում։

Ս.Գրիգորյանի նախաձեռնությամբ և նրա գիտական ղեկավարությամբ 70-ական թվականներին սկիզբ դրվեց շրջակա միջավայրի հետազոտություններում երկրաքիմիական մեթոդների կիրառմանը։ Այս աշխատանքներով, Մոսկվայի և ԽՍՀՄ մի շարք այլ քաղաքների օրինակի վրա ապացուցվել է, որ քաղաքների և նրանց հարող տարածքների երկրաքիմիական քարտեզները շրջակա միջավայրի վիճակը հսկելու արդյունավետ միջոց են։ Այս աշխատանքներն արժանացել են ԽՍՀՄ Ժողովրդական նվաձումների ցուցահանդեսի ոսկե, արծաթե և բրոնզե մեդալների։

Երկար տարիներ աշխատելով Մոսկվայում, Ս.Վ.Գրիգորյանը մշտապես ուշադրություն է դարձրել հանքավայրերի որոնման և շրջակա միջավայրի գնահատման ասպարեզներում երկրաքիմիական մեթոդների մշակմանն ու զարգացմանը Հայաստանում։

1986թ.-ից, Երևան տեղափոխվելուց հետո, մինչև 1992թ. Ս.Գրիգորյանը աշխատել է ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում որպես տնօրեն։ 1993թ.-ից մինչև 1999թ. վարել է Համառուսաստանյան «Զարուբեժգեոլոգիա» գիտահետազոտական ինստիտուտի գլխավոր տնօրենի տեղակալի պաշտոնը։ Այնուհետև, 1999թ. վերադարձել է Հայաստան և աշխատել ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում որպես օգտակար հանածոների և երկրաքիմիայի բաժնի վարիչ։ 2007թ.-ից Ս.Գրիգորյանի աշխատանքային գործունեությունը կապված է եղել ԵՊՀ Երկրաբանական ֆակուլտետի հետ։

Ս.Գրիգորյանը կիրառական երկրաքիմիայի ասպարեզում ԱՊՀ երկրների համագործակցության Ասոցիացիայի նախագահն էր։ Նա երկար տարիներ ներկայացրել է ԽՍՀՄ-ը երկրաքիմիայի և տիեզերաքիմիայի Միջազգային Ասոցիացիայի գործկոմում։ Նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել են մոտ 50 թեկնածուական ատենախոսություններ, այդ թվում՝ Չինաստանի, Չեխոսլովակիայի, Բուլղարիայի, Իրանի մասնագետների կողմից։

Երկար տարիներ Ս.Գրիգորյանը եղել է ԽՍՀՄ Նախարարների Խորհրդին կից Լենինյան և Պետական մրցանակների կոմիտեի անդամ, «Երկրաքիմիա», «Սովետական երկրաբանություն» գիտական հանդեսների խմբագրական կոլեգիաների անդամ, ГЕОХИ, ИГЕМ, ИМГРЭ, Մոսկվայի ՊՀ Երկրաբանական ֆակուլտերի, Համամիութենական հեռակա Պոլիտեխնիկական ինստիտուտի (ВЗПИ) գիտխորհուրդների անդամ, ՀՀ ԳԱԱ «Գիտություններ Երկրի մասին» տեղեկագրի գլխավոր խմբագրի տեղակալը։

Նա մեծ ներդրում ունի ԽՍՀՄ, Շվեդիայի, Չեխոսլովակիայի, Իրանի, Տանզանիայի, Կոնգոյի և այլ երկրների տարբեր երկրաբանա-տեկտոնական կառույցների սահմաններում թաքնված հանքայնացումների և թաղված հանքավայրերի որոնման ու հայտնաբերման մեթոդների գիտական հիմունքների մշակման գործում։

Ս.Գրիգորյանի բազմամյա արգասաբեր աշխատանքը գնահատվել է մի շարք կառավարական պարգևներով։ Նա պարգևատրվել է Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով (1981թ.), «Աշխատանքային գերազանցության համար» մեդալով (1973թ.)։ Նրան շնորհվել է «ԽՍՀՄ ընդերքի Պատվավոր հետախույզ» կոչումը (1984թ.)։

Ս.Գրիգորյանի մահը մեծ կորուստ է երկրաբանական գիտության և հատկապես՝ հանքավայրային երկրաքիմիայի բնագավառի համար։

Համեստ, բարեկիրթ, մեծ էրուդիցիայով օժտված, ընտանիքին ու իր գործին անմնացորդ նվիրված անձնավորության, լավ ընկերոջ և ազնիվ քաղաքացու՝ ակադեմիկոս Սերգեյ Վաղարշակի Գրիգորյանի հիշատակը միշտ վառ կմնա նրա հարազատների, գործընկերների, աշակերտների և նրան Ճանաչողների հիշողության մեջ։

ՀՀ ԳԱԱ Քիմիական և Երկրի մասին գիտությունների բաժանմունք ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ ՀՀ ԳԱԱ «Գիտություններ Երկրի մասին» տեղեկագրի խմբագրություն

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

ԽԱԼԱԹՅԱՆ ԷՐԻԿ ՍՈՒՐԵՆԻ (1934 - 2017)



2017թ. փետրվարի 26-ին կյանքից հեռացավ ձանաչված հիդրոերկրաբան, հանքային ջրերի խոշոր գիտակ, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի ավագ գիտաշխատող, երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածու **Էրիկ Մուրենի** *Խալաթյանը*։

Է.Խալաթյանը ծնվել է 1934թ. հունիսի 9-ին, Երևանում, ծառայողի ընտանիքում։ 1957թ., ավարտելով ԵՊՀ Երկրաբանական ֆակուլտետը, նա մինչև իր

կյանքի վերջը, շուրջ 57 տարի, անընդմեջ աշխատելով Հայաստանի ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում, իր գիտական գործունեությունը անմնացորդ նվիրաբերել է հիդրոերկրաբանական և հիդրոերկրաքիմիական տարաբնույթ հարցերի ուսումնասիրման և բացահայտման գործին։

1962-65թթ. Է.Խալաթյանը սովորում է ասպիրանտուրայում, հայազգի անվանի գիտնական, ԽՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Ն.Ի.Խիտարովի ղեկավարությամբ։ 1971թ. Երևանում, Պետական համալսարանի գիտական խորհրդում հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական ատենախոսությունը «Բորի բաշխման օրինաչափությունները Հայկական ՍՍՀ հանքային ջրերում» թեմայով և ստանում գիտությունների թեկնածուի գիտական աստիձան։

Նրա հետազոտությունների արդյունքում Հայաստանի տարածքում հայտնաբերվել և անջատվել են տարբեր հանքային ջրերի ելքերի ու հանքավայրերի տիպեր, բացահայտվել են նրանց առաջացման և կազմերի ձևավորման օրինաչափություններն ու առանձնահատկությունները, բուժիչ հատկությունները և օգտագործման ոլորտները։ Քաջատեղյակ լինելով և տիրապետելով հարուստ ու արժեքավոր մատենագրական նյութերի, Է.Խալաթյանն իր աշխատություններում հաձախ անդրադարձ է կատարել Հայաստանում հայտնի հանքային ջրերի բուժիչ հատկությունների վերաբերյալ դեռ միջնադարյան նշանավոր գիտնականների դիտարկումներին։ Նրա ուսումնասիրությունների արդյունքում Հայաստանի տարածքում առաջին անգամ անջատվել են ածխաթթվային հանքային ջրերի բորաբեր-հազվագյուտ ալկալամետաղային պրովինցիաները, մշակվել և առաջարկվել են նմանատիպ հանքային ջրերից մի շարք հազվագյուտ ալկալային մետաղների` լիթիումի, ռուբիդիումի, ցեզիումի և տարբեր միացությունների կորզման էկոլոգիապես անվտանգ գիտատեխնոլոգիական աշխատանքների կազմակերպման հնարավորությունները։

Հատկապես արժեքավոր են Է.Ս.Խալաթյանի հետազոտությունները՝ կապված ածխաթթվային ջրերի երկրաքիմիայի, հիդրոերկրաքիմիական կանխատեսման ժամանակ ալգորիթմների դասակարգման փորձի կիրառման հետ։ Բացի այդ, նա, Լայպցիգի Միջուկային հետազոտությունների ինստիտուտի աշխատակիցների հետ համատեղ, կատարել է նաև Հայաստանի հանքային ջրերի հիմնական հանքավայրերի ջրերի համալիր իզոտոպային հետազոտություններ։ Շնորհիվ այս հետազոտությունների, ածխաթթվային թերմերի և սառը ջրերի ծագումնաբանությունն ի ցույց դրվեց նոր լույսի ներքո։

Գիտահետազոտական գործունեությունը Է.Ս.Խալաթյանը հաջողությամբ և սիրով համատեղում էր մանկավարժական գործունեության հետ, դասավանդելով ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետում, ինչպես նաև մասնակցում էր Երևանի Ֆիզիոթերապիայի և առողջարանային բուժման գիտահետազոտական ինստիտուտի գիտական ծրագրերի իրականացմանը։

Է.Ս.Խալաթյանը մասնակցել է բազմաթիվ միջազգային և հանրապետական գիտաժողովների, իսկ 27-րդ Միջազգային երկրաբանական կոնգրեսում ներկայացվել են նրա համահեղինակությամբ կազմված ՀՍՍՀ հիդրոերկրաբանության առանձնահատկություններին նվիրված զեկույցը և կոնգրեսի ուղեցույցը։

Է.Ս.Խալաթյանը հեղինակ է հարյուրից ավելի գիտական աշխատությունների, որոնք տպագրվել են հանրապետական, համամիութենական ու միջազգային գիտական պարբերականներում, երեք մենագրությունների և բազմաթիվ ձեռագիր հաշվետվությունների։ Նրա համահեղինակությամբ են կազմվել Հայաստանի Ազգային ատլասի Հիդրոերկրաբանական և Հանքային ջրերի քարտեզները, ինչպես նաև «Հայաստանի բնաշխարհի» և «Հայկական Հանրագիտարանի» համապատասխան պրակները։ Է.Ս.Խալաթյանը համահեղինակությամբ ստացել է նաև 6 հեղինակային վկայագիր։

Կյանքից հեռացավ Հայաստանի հիդրոերկրաբանության ոլորտի հմուտ մասնագետ, լայն մտահորիզոնի տեր գիտնական և ազնիվ քաղաքացի, ում հիշատակը վառ կմնա նրա գործընկերների և նրան Ճանաչող շատերի հիշողության մեջ։

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ ՀՀ ԳԱԱ "Գիտություններ Երկրի մասին" տեղեկագրի խմբագրություն